№ 17 ՇԱԲԱԹ 25 ՅՈՒՆՎԱՐԻ

1914

ՔԱՌԱՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ 25 ՅՈՒՆՎԱՐԻ № 17

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը
և 7 ամսվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Сергіевская ул. № 5.
Tiflis, Rédaction „Mschak"

Խմբագրատան տելեֆօն № 2—53.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզւով

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.

Տպարանի տելեֆօն № 67.

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ՆԵՐԿԱՅ 1914 Թ. ՀԱՄԱՐ

43-ՐԴ ՏԱՐԻ

12 և 11 ամիս	10 ամիս	9 ամիս	8 ամիս	7 և 6 ամիս	5 ամիս	4 ամիս	3 ամիս	2 ամիս
10 ռուբ.	9 ռուբ.	8 ռուբ.	7 ռուբ.	6 ռուբ.	5 ռուբ.	4 ռուբ.	3 ռուբ.	2 ռուբ.

Ամերիկայի բաժանորդները պիտի վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 32 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի. Թիւրքիայի բաժանորդները՝ 120 ղրուշ։

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։ Յայտարարութիւնների համար պիտի վճարել՝ առաջին երեսի վրա տողատեղին (պետիտ) 20 կ., վերջին երեսի վրա 10 կ.։

ՊՐԷՄԻԱ «Մշակի» տարեկան բաժանորդները, որոնք 1914 թ. ընթացքում լրիւ վճարած կլինեն 10 ռուբլի բաժանորդավճարը, կը ստանան որպէս պրէմիա հետևեալ գրքերից ՄԷԿԸ. «Գր. Արծրունու աշխատութիւնները 1865—1871 թ.», Վրժինի «Մանրանկարները»։ Վերջին գիրքը կը տրվի նրանց, որոնք բաժանորդագրվել են մինչև 1913 թ. դեկտեմբերի 25-ը։ Մնացած բաժանորդները կը ստանան առաջին գիրքը։

Մեր հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ". Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal „MSCHAK".

Վաղը, կիրակի, յունվարի 26-ին, առաւօտեան ժամը 10$^1/_2$-ին, Թիֆլիսի I արական գիմնազիայի V դասատան աշակերտ

ՄԵԼՔԻՍԵԴԷԿ ՄՈՒՐԱՏԵԱՆԻ

մահվան քառասներորդ օրը Վերայի հանգստարանի եկեղեցում կը մատուցվի պատարագ և հոգեհանգիստ հանգուցեալի գերեզմանի վրա, որի մասին խորին վշտով յայտնում են ազգականներին, ծանօթներին և ընկերներին հանգուցեալի ծնողները՝ Միքայէլ Մելքիսեդէկեան և Սօֆիա Ստեփանեան Մուրատեանները։

58. 1—1

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆ

Երկուշաբթի, յունվարի 27-ին

ԲԵՆԵՖԻՍ
ՏԻԿ. ՍԻՐԱՆՈՅՇԻ

ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՒՄԲԸ

Կը ներկայացնէ առաջին անգամ հայ բեմի վրա Ս. Լ. ՊՕԼԵԱԿՕՎԻ

ՀՐԱՇԷԿ ՕՂԱԿ

Դրամա 5 գործ. Թարգմ. Ա. Վրոյրի

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ.—տ. տ. Աշխէն, Արուսեակ, Մանուչարեան, Յասմիկ, Սեւումեան, ՍԻՐԱՆՈՅՇ, պ. պ. Ալլահվերդեան, Բերոյեան, Զարիֆեան, Մամիկոնեան, Մանուէլեան, Տէր-Առաքելեան, Օվի-Ահարոնեան և ուրիշները։

Սկիզբը երեկոյեան ճիշդ ժամը 8-ին։ ◆ Տեղերի գները բենեֆիսային են։

Ռեժիսսեօր՝ ԱՐՄԷՆԵԱՆ

Խորհրդի հերթապահ անդամներ՝ տ. Վ. Մամուլեան, պ. Գ. Ցուրինեան

56. 2—1

100 ՌՈՒԲ. ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆ

Կորցրել եմ մի արկղ, երկարութիւնը մօտ մի արշին և լայնութիւնը քիչ պակաս, բարձրութիւնը 2—3 վերշօկ։ Արկղի մէջ դասաւորված են բազմաթիւ գունազարդ պատկերներ (հայ ձեռագիրներից արտատպած մինիատիւրներ), որ ոչ ոքի պէտք գալ չէ կարող։ Արկղի մէջը կայ նաև հայերէն և ռուսերէն լեզուով տպագրված «Մանրանկարչութիւնը Հայոց մէջ» դասախօսութեանս ծրագիրներից շատ օրինակներ իմ ստորագրութեամբ։ Ոչ ոքի վրա չեմ կասկածում յափշտակութեան մէջ, այլ միայն մոռացմամբ թողել եմ կամ Էջմիածնի կայարանում կամ № 25/26 պօէզդի երկրորդ կարգի վագոնում Էջմիածնից Թիֆլիս գալիս ամսիս 19/20-ին։ Վերադարձնողին սրտագին շնորհակալութեան հետ խոստանում եմ տալ վարձատրութիւն հարիւր ռուբլի։

Գարեգին վարդ. Յովսէփեան

Յանձնել՝
Թիֆլիսում. Ванкскій соборъ. Епископу МЕСРОПУ.
Երևան. Խորէն եպիսկոպոսին.
Ալէքսանդրօպոլ. Հոգևոր կառավարութեան.

տռ. 59. 3—1

ՀԱՏԱՎԱՃԱՌ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ԵՂԲ. Ա. ԵՒ Ա. ՄԻԼԵԱՆՆԵՐԻ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏԱՆ

ԳՕԼՕՎԻՆՍԿԻ ՊՐՕՍՊԵԿՏ, ԿԱԴԵՏՍԿԻ ԿՈՐՊՈՒՍԻ ԴԻՄԱՑ։

Նախորդ տարիների օրինակով ՏԱՐԵԿԱՆ ՄԷԿ ԱՆԳԱՄ միայն

ՆՇԱՆԱԿՎԱԾ Է 7 ՕՐՈՎ.

Յունվարի 18-ից մինչև 25-ը 1914 թ.

ՄՆԱՑՈՐԴ ԿՏՈՐՆԵՐԻ ՄԵԾ ՎԱՃԱՌՔ

ՆՈՅՆՊԷՍ ԵՒ ԱՅՆ ԲՈԼՈՐ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ, ՈՐՈՆՔ ՄՆԱՑԵԼ ԵՆ ՁՄԵՌԱՅԻՆ ՍԵԶՕՆԻՑ

ՄԵԾ ԶԵՂՉՈՎ

Մետաքսէ, բրդէ, մահուդէ, քաթանէ և բամբակէ ապրանքներ, սփռոցներ, վերմակներ, պլէդներ, ՊՕՐՏԻԵՐՆԵՐ և ՏԻՒԼ։

ՄԱՀՈՒԴԻ ԱՊՐԱՆՔՆԵՐ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԵՒ ՌՈՒՍԱԿԱՆ ՖԻՐՄԱՆԵՐԻ։

ԱՅՍՕՐ ՎԵՐՋԻՆ ՕՐՆ Է!

Էժան վաճառքի օրերը ճաշի ժամանակ խանութը փակ կը լինի ցերեկվայ ժամը 2$^1/_2$-ից մինչև 4-ը։

(19, 21, 25) 32. 4—4

Կիրակի, յունվարի 26-ին, երեկոյեան ժամը 7-ին նշանակված է

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅ ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ՏՆԱՅՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

(շարունակութիւն ամսիս 18-ի ժողովի)

Պարապմունքի առարկաներն են՝

1) Առաջիկայ աշնանը Անդրկովկասի կօօպերատիվների համագումարի հրաւիրումը—զեկուց. վարչութեան։
2) Գիւղատնտես Ա. Սահակեանի զեկուցումից բղխած առաջարկների քննութիւնը։
3) Անդրկովկասի տարբեր գօտիների տնտեսական դրութեան կարիքները—զեկուցում բուսաբան Գաբրիէլ Մնացականեանի։
4) Ընտրութիւն վերստուգիչ յանձնաժողովի երեք անդամների։
5) Ընթացիկ հարցեր։

Ընդհանուր ժողովը տեղի է ունենալու Ներսիսեան դպրոցի նախկին շինութեան մէջ Ընկ. գրասենեակում։

Խնդրում ենք ներկայ լինել Ընկ. բոլոր անդամներին։ Կողմնակի անձինք կարող են գալ որպէս հիւրեր։

տռ. 57. 2—1

ՄԻՍԱԿ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ ՓԱԼԱԿԵԱՆՑԸ

ԽՈՒՏՕՐ ՌՕՄԱՆՕՎՍԿԻ, ԿՈՒԲԱՆԻ ՇՐՋ.

յայտնում է ի գիտութիւն իր յարգելի գնողների, որ ներկայ տարվայ յունվարի 8-ից սկսել է բանել

ԿԱՊԱԼՈՎ ՆՈՐ ՎԵՐՑՎԱԾ ՎԱԼՑՕՎԻ ՋՐԱՂԱՑԸ,

ԿՈՒԲԱՆՍԿԱՅԱ ԿԱՅԱՐԱՆԻ ՄՕՏ (Վլադիկավկազեան գծի վրա), որ արդիւնաբերում է օրական մօտ 600 տոպրակ ամենաբարձր տեսակի ալիւր—

ԿՐՈՒՊՉԱՏԿԱ—ՍԷԱՆԿԱ և ՌԱՉՄՈԼ

Այդ ջրաղացի վերաբերմամբ բոլոր պատւէրներով խնդրվում է դիմել իրա՝ ՓԱԼԱԿԵԱՆՑԻ հասցէով՝ Արմավիր, Կուբանի շրջ.։

(և. 2.) տռ. 28. 8—4

Բեռլինի համալսարանի

ԲԺՇԿԱՊԵՏ

Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ

ՆԵՐՔԻՆ հիւանդութիւնների ընդունելութիւն. առանձնապէս կրծքի, թոքերի, ԹՈՔԱԽՏԻ և սրտի. բժշկութիւն նաև խառն ՏՈՒԲԵՐԿՈՒԼԻՆՆԵՐՈՎ, արհեստական ՊՆԷՎՄՕՏՕՐԱԿՍՈՎ։ Թոքերի և սրտի, նաև ուրիշ օրգանների քննութիւնը և լուսանկարելը լուսաւորված ՌԵՆՏԳԷՆԵԱՆ ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐՈՎ։ Ամէն օր 9—1 ժամ ցեր. և 5—7 ժ. երեկոյեան. ՉՔԱՒՈՐՆԵՐԻՆ ԱՌ. Ժ. 9—10 ՁՐԻ։ Бебутовская 23, тел. 7—92.

(ա.օ.) տռ. 977 100—61

ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՏԱՐԱՁԱՅՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

I

Մենք դրականապէս ընդունում ենք, որ հայ և վրացի ժողովուրդների միջև ոչ մի տարաձայնութիւն, թիւրիմացութիւն և թշնամական փոխադարձ վերաբերմունք իսկապէս գոյութիւն չունի և այդ երկու ժողովուրդները միշտ իրար հետ հաշտ և բարեկամաբար են ապրել։ Սակայն նոյնքան ճշմարիտ է, որ որոշ թիւրիմացութիւններ, նոյնիսկ թշնամական զգացումներ տիրում են վրաց և հայ ինտելիգենցիայի որոշ խաւերի և մտքերի միջև։ Եւ որովհետև հայ ինտելիգենցիան կամ գէթ նրա մի որոշ խաւը և հայ մամուլը միայն այսօր որևէ մեղադրական բանաձև հրապարակ չէ նետել վրացիների դէմ, այլ վրաց մամուլը և ինտելիգենցիայի մի մասը հանդէս են եկել որոշ և շատ բացայայտ յարձակումներով ու մեղադրանքներով հայերի դէմ, ուստի պէտք է ենթադրել, որ թիւրիմացութիւնը, թշնամական զգացումները վրացի ինտելիգենտների և գործիչների մէջ աւելի շատ է և սաստիկ, քան հայ ինտելիգենտների մէջ։ Կարելի է նոյնիսկ համարձակ ասել, որ հայ ինտելիգենցիան, հայ մամուլը, հայ բուրժուազիան (որովհետև վրացի քննադատները ամենից շատ յարձակվում են բուրժուազիայի վրա), էլ չենք խօսում հայ գիւղացիութեան, հայ արհեստաւորութեան մասին, ոչ մի մեղադրանք, ոչ մի գանգատ վրացիների դէմ մինչև այսօր չէ հնչեցրել։

Մեղադրանքը, յարձակումները եղել են վրացիների կողմից, այն էլ շատ բացայայտ, շատ մեկին և որոշ կերպով։

Այդ մեղադրանքները, յարձակումները ցոյց են տալիս, որ, արդարև, վրաց ինտելիգենցիայի, գործիչների և հասարակութեան որոշ մասի, որոշ խաւերի մէջ կան նախապաշարումներ, կանխակալ կարծիքներ և ձևակերպված մեղադրանքներ հայերի դէմ։ Եւ որովհետև ամեն մի թիւրիմացութիւն, մեղադրանք, կանխակալ կարծիք, երբ չէ լուսաբանվում, հերքվում, առիթ է տալիս թշնամութեան, կրքերի, ատելութեան աճման, իսկ թէ հայերի և թէ վրացիների, իբրև պատմական երկու կուլտուրական ազգերի համար բնաւ շահաւէտ չէ իր հետ թշնամաբար ապրել, ուստի և մենք մեր բարոյական պարտականութիւնը համարեցինք կոչ անել երկու ազգերի ինտելիգենտ ոյժերին՝ պարզել թիւրիմացութիւնները, տարաձայնութիւնները։

Այդ կոչն անելով, մենք, բնականաբար, ընդունում էինք, որ եթէ փոխադարձ բացատրութիւնները ցոյց տան, որ վրացիների մեզ՝ հայերիս դէմ բարդած մեղադրանքները կամ նրանց մի քանիսը ճիշդ են, մենք հայերս պարտաւոր ենք աշխատել վերացնել այդ մեղադրանքները։ Այս հանգամանքը մենք շեշտում ենք նրա համար, որ վրաց լրագիրներից մի քանիսը մեղադրեցին մեզ, թէ իբր մենք յանդիմանութիւն ենք կարդում կամ կոչ ենք անում միայն վրացիներին։

Մեր կոչին պատասխանեցին։ Բացի դրանից անկախ կերպով տպվեցին վրաց թերթերի, ինչպէս և «Зак. Рѣчь» թերթի մէջ նոր յօդուածներ, որոնց մէջ, վերջապէս, շատ պարզ կերպով ձևակերպված են այն մեղադրանքները, որ վրաց հասարակութեան մի մասը և մամուլի մի քանի օրգանները բարդում են հայերի վրա։

Բոլոր մեղադրանքների մէջ, որոնք մինչև այսօր հանդէս են հանված հայերի դէմ, ուշադրութեան արժանի են երեքը։ Առաջինն այն է, որ Պետական Դումայի ընտրութեան ժամանակ հայ ընտրողները աշխատեցին տապալել Անդրօնիկօվ փաստաբանի կանդիդատութիւնը, որ իբր վրաց ժողովրդի մեծամասնութեան ընտրելին էր, և նպաստեցին սօցիալիստ Չխէիձէի ընտրութեան, որ փոքրամասնութեան ընտրելին էր։ Երկրորդը մի ամենածանր մեղադրանք է, այն է, որ հայ ինտելիգենցիան իբր մշակել է ազգայնական մի քաղաքական ծրագիր, որի իրագործումն իրանց վրա են առել հայ կապիտալիստները, այն է՝ յետ մղել վրացիներին դէպի հիւսիս, իրանց սեփական հայրենիքից, ձեռք բերել վրացիների հողերը և դրանով լիակատար ոչնչացնել վրաց ժողովուրդը, որ առանց տերրիտորիայի կը ջնջվի։ Երրորդ մեղադրանքը կայանում է նրանում, որ հայերը աշխատում են Անդրկովկասի նահանգների նոր վարչական բաժանումն առաջ բերել կառավարութեան ձեռքով այնպէս, որ Վրաստանի անբաժան մասն համարվող մի քանի գաւառներ անջատել տան նրանից և կցեն Երևանի նահանգի հետ, որպէս զի աւելի կոմպակտ հայկական նահանգ ստեղծեն։

Ահա այն գլխաւոր մեղադրանքները, որ «Էրի», «Կլդէ» և «Зак. Рѣчь» թերթերը բարդում են հայ ինտելիգենցիայի և բուրժուազիայի վրա։ Մենք չենք խօսում Քութայիսում հրատարակվող «Սիմարթլիս Խմա» թերթի մասին, որ իր № 15-ում «Հայ-վրացական միութիւնը» վերնագրով մի յօդուածով խնդիրը բոլորովին այլ հողի վրա է դնում և համարում է մեր կոչը՝ իբրև թակարդ՝ լարված բուրժուազիայի կողմից՝ ընդդէմ հայ և վրացի գիւղացիութեան և բանւորութեան։

«Սիմարթլիս Խմա» թերթին մենք առայժմ չենք պատասխանի, մանաւանդ որ անկօռեկտ ոճով է գրված։

Բայց վերոյիշեալ մեղադրանքները կարօտ են մեր կողմից բացատրութեան, որովհետև, եթէ, իսկապէս, այդ մեղադրանքները ճիշդ լինէին, վրացիները ամենայն իրաւունք ունէին մեզ յանդիմանելու և թշնամական զգացումներ տածելու դէպի մեզ, իբրև դէպի մի ազգի, որ ագրեսիվ քաղաքականութիւն է վարում իր դրացի ազգի դէմ։

Այդ բացատրութիւններին կը դառնանք վաղը։

Հ. Առաքելեան

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

23 յունվարի

Պետերբուրգ.—Գիշերս վախճանվեց նկարչութեան ակադեմիկոս գաղտնի խորհրդական Բոտկինը։

Սենատն անհետևանք թողեց «Рѣчь»-ի խմբագիր Եվկինի վճռաբեկ բողոքագիրը, որին Պետերբուրգի դատաստանական պալատը դատապարտել է 3 ամսով բանտի Օդեսայի նախկին քաղաքապետ Տօլմաչեվին զրպարտելու համար։

Պետերբուրգի դատ. պալատը 4 տարով բանտարկութեան դատապարտեց կամաւոր զինուոր Եակօվլեվին, աւստրիական կառավարութեանը գաղտնի տեղեկութիւններ հաղորդելու համար։

Սկսվեցին հայրենասիրական ինստիտուտի 100-ամեայ տօնակատարութեան հանդէսները։

Մինիստրների խորհուրդը ընդունեց օրէնսդրական հաստատութիւններին ներկայացնելու համար այն օրինագիծը, որով 5 տարի շարունակ ամէն տարի 25,000 ր. նպաստ է տրվելու Թոքախտի դէմ մաքառող համառուսական լիգային։

Մինիստրների խորհուրդը մերժեց Կիևի զեմստվօյի միջնորդութիւնը և չը թոյլատրեց գումարել զեմստվային ֆինանսները բարելաւելու հարցի առիթով համառուսական համաժողով։

Մինիստրների խորհուրդը ընդունեց օրէնսդրական հաստատութիւններին ներկայացնելու համար այն օրինագիծը, որով առաջարկվում է յատկացնել 169,500 ր. Ռուսաստանի այն տեղերը հետազօտելու համար, ուր երևան են հանված բաղի, ինչպէս նաև ձեռք բերած բաղին գնելու բարձր կրթական և գիտական հաստատութիւնների համար։

Պետերբուրգ. — Դումայի ֆինանսական մասնաժողովը ցանկալի գտաւ տուրք նշանակել սինեմատօգրաֆների վրա։

Բեռլին. — Ծովային հարցերի յայտնի գրող Պերսիուսը «Բեռլիներ-Տագեբլատում» քննում է Տիրպիցի երէկվայ յայտարարութիւնները և գտնում է, որ Տիրպիցը ուշադրութեան չէ առնում, որ Ռուսաստանը և Ֆրանսիան մինչև վերջին ժամանակ անտես էին առնում ծովային սպառազինումը, ուստի այժմ պէտք է ծախսեն ծովային գործի վրա Գերմանիայից աւելի, որը նաւատորմի օրէնքի այժմ 14 տարի շարունակ ծախսում էր ահագին միջոցներ ծովային ինքնապաշտպանութեան համար։ Սխալ է նոյնպէս Տիրպիցի այն յայտարարութիւնը, թէ վերջին հինգ տարում Գերմանիան համեմատաբար քիչ է ծախսել ծովային բիւջէով. ընդհակառակն, Գերմանիան իր ծովային այժմ ներկայումս գրաւում է երկրորդ տեղը։ Ոչ ոք ապագայում չէ կարող խլել նրանից այդ տեղը։

Լօնդոն. — Բէյտէրի գործակալութիւնը լիազօրված է յայտնելու, որ պալատական շրջաններում ոչինչ յայտնի չէ այն մասին, թէ ապրիլի վերջերին մեծ բրիտանական Թագաւորական զոյգն այցելելու է Վիեննա։

Մարմարօշ-Սիգէր. — Ուգրո - ռուսների գործը։ Առ. ժամը 9-ի մօտերը ցուցում է տալիս կոմս Բոբրինսկին։ Դատարանի նախագահը բացատրում է Բոբրինսկիին վկայի պարտականութիւնները և մատնանշում է, որ ստայօդ ցուցմունքները ունգարական օրէնքով պատժվում են 5-ամեայ բանտարկութեամբ։ Բոբրինսկին խնդրում է թոյլ տալ սկզբում խօսել ռուսերէն, որպէս զի հասկանալի լինի մեղադրեալներին, իսկ յետոյ ֆրանսերէն։ Նախագահը որոշում է հարցաքննութիւնը կատարել ռուսերէն։ Բոբրինսկին ցոյց է տալիս, որ գալիցիական-ռուսական ընկերութեանը օտար է քաղաքականութիւնը, նա հետամուտ է սոսկ գրական-կուլտուրական նպատակի, ուղղված է ուկրայնական շարժման և պօլօնիզմի դէմ։ Ընկերութիւնը երբէք նիւթական օգնութիւն չէ հասցրել ռուսներին Գալիցիայում, Բուկովինայում և Ունգարիայում։ Բոբրինսկին իր բրօշիւրի մէջ ժողովրդին չէ հանում աւստրիական կայսրի դէմ, քանի որ ինքը միապետական է։ Նա երբէք չէ խօսել այն մասին, թէ անհրաժեշտ է մեծ ռուսական գաղափարը տարածել Ունգարիայում։ Ի միջի այլոց վկան ասում է, որ Ռուսաստանում ուղղափառ եկեղեցու գլուխ համարվում է Յիսուս Քրիստոսը։ Թագաւոր Կայսրին եկեղեցական գործերում աւելի քիչ իրաւունքներ են վերապահված, քան թէ աւստրիական կայսրին՝ Աւստրօ-Ունգարիայում։ Իր գրքերում վկան քննադատել է միայն իշխանութիւններին, այլ ոչ թէ միապետին։

Սօֆիա. — Գասաբօվը նշանակվեց դեսպան Վիեննայում։

Լիմա. — Պալատի վրա յարձակումը տեղի ունեցաւ առ. ժ. 4 ու 30 րոպէին։ Կրակում էին համազարկերով օդում, որպէս զի ժողովուրդը մի տեղում չը խմվի։ Սպանվեց մի քաղաքացի։ Քաղաքում տիրում է մեծ յուզմունք։ Դրամատները և խանութները փակ են։ Նախագահին իբրև գերի տարել են Կալեաո։ Նա աքսորվելու է։

ԲԱԼԿԱՆԵԱՆ ԳՈՐԾԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

23 յունվարի

Լօնդոն. — Բէյտէրի տեղեկութիւնների համաձայն, դիւանագիտական շրջանները ճշգրտում են Վիեննայի տեղեկութիւնը այն բանի մասին, թէ Եգէյեան կղզիների և ալբանական սահմանի հարցին վերաբերող մեծ պետութիւնների վճիռը կը յայտարարվի Կ. Պօլսում և Աթէնքում միայն այն ժամանակ, երբ ամբողջ հարցը վերջնականապէս կը հարթվի։ Մեծ պետութիւնները համոզվել են, որ յոյները խաղաղութեան են ձգտում, ուստի և վճռել են հարթել ալբանական հարցը նոյնպէս խաղաղ կերպով։

Աթէնք. — Ալբաններին վանելու ուղարկված զօրքերը եկան Վակուֆօխօրիա, մեծ ջարդ տուին ալբաններին և ցիրուցան արին նրանց։ Ալբանական շարժման կենտրոն ծառայող Բեսարակա գիւղը յոյները ամբարձել են։ Ալբանները փախան։ Յոյները կորցրել են սպանված չորս զինուոր։ Նրանք իրանց յաղթական արշաւանքը շարունակում են։ Ջեպօվօյի մօտերը սկսվել է ճակատամարտ ալբանների և յոյների միջև։

Բուխարեստ. — Եկաւ յունաց գահաժառանգը և կայարանում ընդունվեց գահաժառանգ արքայազնից և մինիստրներից, այցելից մինիստր - նախագահին, բարձրաստիճան պաշտօնական անձանց և միտրօպօլիտին։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵՐԿՈՒ ԿԱՐԾԻՔ ԼԻՆԵԼ ՉԻ ԿԱՐՈՂ

Պետական լեզուն Կովկասում՝ մանաւանդ հայերիս մէջ տարածելու, դպրոցներում նրան առաջնակարգ տեղ տալու մասին շատ է խօսվել։

Պէտք է խոստովանել, որ նրա անհրաժեշտութիւնը միշտ էլ աչքի է ընկել մեր մէջ. և այդ շատ բնական է, քանի որ նոյն պետութեան մի անդամը լինելով՝ մեր առօրեայ կենսական խնդիրների առնչողականութիւնից դրդված ամեն վայրկեան շփման և յարաբերութեան մէջ ենք այդ լեզուի հետ։ Սակայն պէտք է խոստովանել և այն, որ կառավարութեան սխալ քաղաքականութիւնը մի կողմից՝ ռուս թթված պատրիօտների նեղհայեցողութիւնն ու կասկածելի վերաբերմունքն էլ միւս կողմից պատճառ են դարձել, որ ոմանք ռուս լեզուի ուսման չեն վերաբերվել լրջօրէն։

Սրանք կարծել և դեռ կարծում են, որ մենք իբր խուսափում ենք այդ լեզուից և չենք ցանկանում տարրականացնել այն մեր մէջ. ու նման այդպէս մտածողների բացասական վերաբերմունքը մեր հասարակութեան մէջ այն գաղափարն է ստեղծել, որ իսկապէս համոզվել ենք, որ նրանց ձգտումը կովկասցիներին ռուս ժողովրդի հետ տարրալուծելու մէջն է կայանում։

Որ ռուս շովինիստներին և կառավարութեան նեղհայեաց դեկավարներին առաջ մղող գլխաւոր դրդիչ շարժառիթը կովկասցիներին ուղղափառների հետ ի մի ձուլելու տենդենցն է եղել, սա կասկածից դուրս է, և այդ իսկապէս մեր ժողովրդի կողմից համարվել է ռուսացման քաղաքականութիւն. ու մասնաւորապէս մեր հայ մտաւորականների վախը այս դէպքում մանաւանդ մասամբ ներելի է համարվել, երբ աչքի առաջ են ունեցել նրանք ընդհանրապէս մեր հասարակութեան օտարամոլութիւնը, որի շնորհիւ հէնց այսօր էլ մեր ընտանիքներում վտարված և արհամարհված է մայրենի լեզուն։

Կառավարութեան բռնած դիրքն ու բռնի միջոցներն ընդհանրապէս տեղացիներին շատ են օտարացրել իրանից։ Ասում ենք, եթէ այդ սխալ քաղաքականութիւնը չը լինէր, պետական լեզուն վաղուց մեր մայրենի լեզուի դերում կը լինէր, և կարող եմ այսօր շեշտել այստեղ այն փաստը, որ վերջին առաջադրական և մեղմ քաղաքականութեան տարիներում պետական լեզուն այն աստիճան կուլտուրականացաւ մեր մէջ, որքան չէ եղել անցեալ մի քանի տասնեակ տարիներում։

Վերջին տասնամեակում եւրօպական մի քանի լեզուների ուսուցումը միջնակարգ դպրոցներում իրաւացիօրէն արդէն քաղաքացիութիւն է ստացել. և երբ այս այսպէս է, ապա որքան աւելի մեծ անհրաժեշտութիւն է ներկայանում մեզ համար պետական լեզուի իւրացումը, առանց որի ներկայ դարում մեր կեանքի քայլերը կապված կը լինեն ահագին դժուարութիւնների հետ։

Կառավարութիւնը իր այդ թթված շովինիստներով Կովկասում պետական լեզուն տիրապետող դարձնելու տենչերի հետ միասին, որպէս արդիւնաւոր սիստեմ իր սխալ քաղաքականութեան, մինչև այսօր դեռ դանդաղում է բարձրագոյն դպրոցի բացումը մերժում, որը մի զօրեղ խթան և հզօր գործօն է հանդիսանալու մեզ համար այդ անհրաժեշտ լեզուի ընդհանրացմանը։

Անհերքելի է, որ մանկավարժական հարկադրական օրէնքի համաձայն, թէ պետական լեզուի և թէ այլ գիտական առարկաների հիմնաւոր ուսուցման կարևորութիւնը պահանջում է, որ կովկասցի երեխաների և սաների ուսուցումը առաջ տարվէր գլխաւորապէս տեղացի համալսարանաւարտ դասատուներով։ Տեղացի սաներին միանգամայն օտար և խորթ ուսուցիչը իր ընդունակութեամբ և պարտաճանաչութեամբ հանդերձ անկարող կը լինի ցանկալի արդիւնք տալ և իր գործը առաջ տանել այնպէս, ինչպէս այդ կարող էր անել տեղացի դասատուն. սակայն այսօր ոչ միայն Կովկասի պետական միջնակարգ կրթական տաճարների՝ այլ և նրա տարրական դպրոցների դռները փակված են մեր բազմաթիւ մասնագէտ մանկավարժ համալսարանաւարտների առաջ։

Բացի այս, մեր երկրի բարօրութեան և յառաջընթացութեան տեսակէտից որքան կարևոր է մեզ համար այդ լեզուի տարրականացումն ու զարգացումը, նոյնքան էլ շատ վիրաւորական է, երբ տեսնում ենք, որ հէնց այսօր էլ տեղական բնիկ ժողովուրդը կառավարութեան աչքում խորթ զաւակ ներկայանալով՝ մեր մայր երկրի պետական նոյնիսկ երկրորդական հաստատութիւններում. նրա ծառայողները մատներով են հաշվում, որոնք և շատ նուազ բացառութիւններ են համարվում այդ հիմնարկութիւնների մէջ։

Բայց երբ կառավարութիւնը կովկասցիներին իր տան հարազատ զաւակը կը համարէ, երբ կը վերացնի իր այդ ընտանիքի մէջ թագաւորող վնասաւոր խտրութիւնները, երբ նոյն տան անդամների մէջ գերիշխող անտագօնիզմին կը փոխարինէ հաւասարութիւնն ու անխտրականութիւնը, այն ժամանակ պետական անհրաժեշտ լեզուի առաջ զարգացումը աւելի ուժեղ թափով առաջ կերթայ, և այդ լեզուի անհրաժեշտ զարգացման մասին երկու կարծիք լինել չէ կարող։

Բեհո

ՀԱՅԿ. ԲԱՐԵԳ. ԸՆԴՀ. ՄԻՈՒԹԻՒՆԸ

Հայկական Բարեգ. Ընդհ. Միութիւնը հետզհետէ լայն ծաւալ և բարգաւաճում է ստանում։ Նրա օրգան «Միութիւն» ամսագրի նոյեմբերի համարում տպված է, որ Միութեան պատուաւոր անդամ և Իզմիրի մասնաժողովի ատենապետ դոկտ. Պօղոս Կոստանդեան նուիրել է Միութեան Իզմիրի Պէլլա-Վիսթա փողոցի վրա ունեցած իր չորս տները՝ 4000 օսմ. ոսկի արժողութեամբ և 260 ոսկի զուտ եկամուտով տարեկան։ Այդ նուէրի համար Միութիւնը հռչակել է Կոստանդեանին Միութեան բարերար անդամ։

Միութեան մի այլ անդամ՝ Վարդան Պապայեան, բնակիչ Թանթարի (Եգիպտոսում), նուիրել է իր շարժուն և անշարժ գոյքերը՝ 2000 ոսկի արժողութեամբ՝ իր ծննդավայրին՝ Բաղեշի մէջ աղջկանց գործնական մի արհեստանոց բանալու համար։

Լօնդոնի Հայ Միացեալ Ընկերութիւնը որոշել է տարեկան 50 անգլիական ոսկի տալ Միութեանը՝ Հայաստանի մէջ իր անունով 2—3 գիւղային վարժարաններ բանալու համար։

Նոյնպէս Լեմբէրգի հայ կաթօլիկ արքեպիսկոպոս Թէոդորովիչ նուիրել է 100 ֆր.։

Ինչպէս գիտեն «Մշակի» ընթերցողները, Միութիւնը որոշել է Կովկասում ևս բանալ իր ճիւղը։ Այդ նպատակով նա իր ներկայացուցիչ կարգելով Կովկասում Հ. Առաքելեանին՝ լիազօրել էր վերջինիս հարկաւոր դիմումն անել, կայսերական կառավարութիւնից թոյլտուութիւն ստանալու համար։ Դեռ 1912 թ.՝ Հ. Առաքելեան, ընկերակցութեամբ պ. պ. Ս. Կիւլպէնկեանի, Յարութիւն Մսերեանի և Արամ Ֆերմանեանի, դիմեց Կովկասի փոխարքային խնդրագրով՝ թոյլ տալ բանալ Միութեան ճիւղը Կովկասում։ Փոխարքան սկզբունքով տալով իր հաւանութիւնը՝ առաջարկեց ներկայացուցիչներին դիմել Նահանգական ատեանին և նրանից ստանալ թոյլտուութիւն։

Սակայն Նահանգական ատեանը մինչև այսօր չը տուեց այդ թոյլտուութիւնը, առարկելով թէ Միութեան կենտրոնը գտնվելով Ռուսաստանից դուրս՝ իր ձեռնհասութեան չէ վերաբերում այդպիսի ընկերութիւնների հաստատութեան թոյլտուութիւնը։

Ամսիս 20-ին, Հ. Առաքելեան նորից ներկայացաւ անձամբ փոխարքայի քաղաքացիական մասի օգնական հօֆմէյստէր Պետերսօնին և, յայտնելով որ մի քանի տարի առաջ նոյնանման ճիւղի համար թոյլտուութիւն է տրված, այն է՝ թոյլատրված է բանալ Թիֆլիսում «Alliance Française» ֆրանսիական ընկերութեան ճիւղը, որի կենտրոնը գտնվում է Պարիզում, խնդրեց հրահանգել Նահանգական ատեանին տալ խնդրված թոյլտուութիւնը։ Ընդսմին Հ. Առաքելեան զեկուցեց փոխարքայի օգնականին, որ Հ. Բ. Ը. Միութիւնը քաղաքական ոչ մի նպատակ չունի և զուտ կուլտուրական բարեգործական մի հիմնարկութիւն է։ Հօֆմէյստէր Պետերսօն սիրալիր ընդունելութիւն ցոյց տուեց և խոստացաւ շատ շուտով կարգադրել խնդիրը։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Շուշի-Եւլախ երկաթուղու շուրջը

Եւլախ, 13 յունվարի

Շուշի-Եւլախ երկաթուղագծի վրա աշխատող բանւորների և Աղդամ գիւղի հողատէրերի միջև այս օրերս ընդհարում և յարաբերութիւնների լարումն է տեղի ունեցել։

Պատճառները հետևեալ կերպով բացատրեցին։ Վաղուց աղդամցիք վատ տրամադրութեամբ են ներշնչված դէպի շինվելիք գիծը, որովհետև, ինչպէս ընթերցողները գիտեն, գիծը պիտի անցնէ Աղդամից հեռու, դէպի հին ճանապարհը, որը սպառնում է Աղդամի եթէ ոչ ոչնչացումը, գոնէ քայքայում պիտի առաջացնէ թիւրքական այդ կենտրոնում։

Թուրքերը, սկսած Բագուի «Իտտեխլի-գենջեյայից», չը դլացան անհանգստացնել Սարուխանօվօ-Կուբինսկի ընկերութ. և մինչև անգամ կառավարութեան ուշադրութիւնը հրաւիրեցին զանազան մեկնութիւններ տալով գիծը Աղդամից հեռու շինելու համար։ Սակայն ընկ. վարչութիւնը տեխնիկական յարգելի պատճառներով փակեց չար բերանները։

Ներկայումս աշխատանքները հասել են Աղդամի սահմանները. վերջինիս բնակիչների մեծ մասի մէջ չար լեզուները սկսել են մտքեր պղտորել, որպէս զի թոյլ չը տան գիծը իրանց սահմանով անցկացնելու, և ժողովում են բաւական հոգիներ ու ստիպում բանւորներին դադարեցնել աշխատանքները։ Շուտով յայտնվում է նահանգապետին, որի կարգադրութեամբ անմիջապէս դէպքի վայրն է հասնում Շուշու գաւառապետը՝ տեղն ու տեղը ուսումնասիրելու խնդիրը։ Մինչև գաւառապետի գալը գտնվում են գիտակից թուրքեր, որոնք աշխատում են մասսային բացատրել իրանց անտակտ վարմունքը և այնպէս պատրաստում են, որ գաւառապետը տեղ հասնելուն պէս հասարակութիւնը փոխում է իր դիրքը և միայն յայտնում, որ իրանք ոչ թէ թոյլ չեն տալիս, այլ պահանջում են այն ծառերի գինը, որ պէտք է կտրվի ճանապարհի շինութեան պատճառով։

Խնդիրը այդքանով էլ վերջանում է. պիտի ընտրվի մի կօմիսիա, որպէս զի գնահատէ ծառերը։

Տեղացիք պնդում են, որ կարճ ժամանակի ընթացքում աշխատանքները կաւարտվեն, և հաւանական են համարում, որ ամառանոցից վերադարձողները կարող են օգտվել։

Ս. Գարագաշ

Դատապարտելի զանցառութիւն

Ջաքաթալա, 20 յունվարի

Վրաստանի և Իմերէթի թեմի առաջնորդը ամիսներ առաջ առանձին գրութիւններ է ուղարկում Ջաքաթալայի հայոց եկեղեցու քահանային և եկ.-ծխ. դպրոցի հոգաբարձութեանը՝ երկու ստորագրութեան թերթի հետ միասին՝ յանձնարարելով նրանց շուտափոյթ հանգանակութեան ձեռնարկել յօգուտ դպրոցական ֆոնդի։

Մինչև օրս ոչ ոք տեղեկութիւն չունէր մեզանից, որ առաջնորդը այդպիսի դիմում է արել՝ մեր 5—6000 հոգուց բաղկացած հարուստ համայնքի մէջ ևս ժողովարարութեան ձեռնարկելու մեր ազգի ամենամեծ կարիքը հոգալու համար։ Մեր քահանան ու հոգաբարձուները այդ գրութիւնները անուշադիր էին թողել, մինչև որ առաջնորդը հեռագրով պահանջում է անյապաղ ներկայացնել իրան մինչև օրս հանգանակված գումարը՝ յղելու ըստ պատկանելոյն։

Մեր հոգաբարձուներից մէկը, կամենալով քաւել իր ընկերների մեղքը, դիմում է շրջանիս կառավարչին թոյլտուութիւն ստանալու հանգանակութեան համար, որպէս զի հարկադրված չը լինեն հանգանակութեան

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՄԵԾԱՆՈՒՆ ՀԱՅԱԳԷՏԸ ԵՒ ԲԱՆԱՍԷՐԸ ԲՈԼՈՐՈՎԻՆ ՄԵՆԱԿ

Նորայր Բիւզանդացին։

Վենետիկում տեսայ նրան. մեն-մենակ, փակված իր համեստ բնակարանում, գրքերի և աշխատանքների մէջ խորասուզված։

Մի անակնկալ էր ինձ համար, երբ Ս. Ղազարի երիտասարդ միաբաններից մէկը մի օր հարցրեց ինձ, թէ չէի ուզենայ այցելութեան գնալ Նորայրին։ Անակնկալ եմ ասում, որովհետև առաջին օրերը Հայոց կղզում իմ նորանոր ծանօթութիւնները և պարապմունքները այնքան էին ինձ զբաղեցնում, որ քաղաք վերադառնալիս էլ դեռ ես նոյն տպաւորութիւններով էի ապրում։ Ես չէի կարծում նոյնիսկ, որ Վենետիկում բացի Մուրադ-Ռափայէլեան դպրոցի միջավայրը կարող է լինել և ուրիշ հայ բնակիչ, այն էլ մեր ականաւոր հայագէտներից մէկը։ Մեր մէջ այնքան քիչ է գրվում և խօսվում Բիւզանդացու մասին, որ իմ յիշողութիւնից վրիպել էր մինչև անգամ, որ նա վերջին տարիներս Ադրիականի չքնաղ ծովածոցում է հաստատել իր բոյնը. ես նրան որոնում էի Սկանդինավիայում, որովհետև դեռ «Բնասէրի» ժամանակներից Ստոկհօլմի հետ է եղել կապված նրա անունը։

Norayr de Byzance.

Այսպէս էին ճանաչում մեր պատկառելի հայրենակցին Շուէդիայում, երբ ես Ստոկհօլմի և Ուպսալայի մատենադարաններում թերթելով նրա գիտական գործերը՝ ցանկանում էի տեղեկութիւններ ստանալ նրանց հեղինակի մասին։

Ահա այս իմ նախկին հետախուզումներիս բաւարարութիւն ստանալու կատարումն էի տեսնում երիտասարդ վարդապետի սիրալիր առաջարկի մէջ. մի առաջարկ, որ թերևս յիշեցնում էր ինձ իմ պարտականութիւնը։

Հետևեալ օրը, կէսօրից առաջ, երիտասարդ վարդապետը բարի եղաւ քաղաք գալ և ինձ առաջնորդել Բիւզանդացու բնակարանը։

Վաթսուն, կամ քիչ աւելի, բեղմնաւոր տարիները իր թիկնեղ ուսերին առած՝ մի պատկառելի կերպարանք մեր դէմը ելաւ, երբ մենք ներս մտանք։ Բարձր հասակը, համակրելի արտաքինը և հայրենի դիմագծերը՝ իր անսեթևեթ ու արևելեան պարզ շարժումների հետ միախառնված՝ վերին աստիճանի նպաստաւոր կացուցին նրա ինձ հանդիպումի առաջին տպաւորութիւնը։

Ուղեկիցս ինձ ներկայացրեց տանտիրոջը, անունս ազգանունս տալուց բացի, թելով մի քանի կենսագրական տեղեկութիւններ, համեմված գեղեցիկ ածականներով։

Իր գոհունակութիւնը և գլխի դրական շարժումներով վարդապետի ասածներին կարծես համաձայն լինելը յայտնելով, պ. Նորայր հրաւիրեց մեզ նստելու։

Սովորական հարց ու բարևից յետոյ՝ բնականօրէն մեր խօսակցութեան նիւթ պիտի դառնար հայ գրականութիւնն ընդհանրապէս և հայ բանասիրութիւնը մասնաւորապէս։ Չը գիտեմ որքան բաւարար գտաւ յարգելի Նորայրն իմ տուած տեղեկութիւնները մեր՝ կովկասահայ բանասիրութեան վերաբերեալ, բայց ես շուտով համոզվեցի, որ նրա ունեցած տեղեկութիւնները պակաս հետաքրքրական չէին իմ հաղորդածներից։ Նա գնաց իր առանձնասենեակը և բերեց հայ պատմագիրներից վերջին տարիներումս Թիֆլիսում տպագրված մի քանի հատորներ, լուսանցքներում իր արած սրբագրութիւններով։

Ես չեմ ուզում մազաչափ անգամ վիրաւորանք հասցրած լինել այդ հատորները հրատարակող մեր հայկաբաններին, որոնք նոյնպէս հայ բանասիրութեան ասպարէզում առաջաւոր տեղեր ունեն գրաւած (Միհրան, Մ. Աբեղեան, Ս. Կանայեան, Ս. Մալխասեանց, Ս. Յարութիւնեան), բայց և ականատես լինելով Բիւզանդացու հարիւրաւոր ուղղումներին և լսելով նրա համոզիչ բացատրութիւնները, ցաւ պիտի յայտնեմ, որ այդպիսի մի նշանաւոր հայերէնագէտ հեռու է պահվել մատենագիրների խմբագրութեան գործից ինչ-որ դրամական անհամաձայնութեան համար։ Անշուշտ մատենագիրները հրատարակող յանձնաժողովը իր տրամադրութեան տակ չէ ունեցել Նորայրի պահանջած գումարը, բայց պէտք էր հայթայթել մի կերպ, կամ համաձայնութեան գալ։ Ինչ վերաբերում է անցած-գնացածին (գոնէ առաջին տպագրութիւնների վերաբերմամբ)՝ դրա մասին, ի հարկէ, ուշ է այլևս խօսելը. բայց մատենագիրների շարքը շատ մեծ է և անհրաժեշտ պահանջ է ծառանում մեր առաջ, յանուն գիտութեան, որ յիշեալ յանձնաժողովը ամեն միջոց գործ դնի, օգտվելու Բիւզանդացու անբաւ քրտնաջան աշխատութիւններից և սրբագրութիւններից։ Իր մանրազննին պեդանտութեան հասցրած հետախուզումներով թերևս ամենքը համաձայնեն, որ Նորայրը եզակի դէմք է մեր բանասիրութեան մէջ։ Նա իր կեանքում ոչ մի կողմնակի պարապմունք կամ պաշտօն չէ ունեցել, և Ս. Ղազարից հեռանալուց մինչև օրս էլ շարունակ զբաղվել է իր անշահ մասնագիտութեամբ։

— Կը ցաւիմ, տիար Լևոնեան, կը ցաւիմ, որ իմ աշխատանքները գնահատող չկայ, իմ ուսումնասիրութիւններու վրայ ուշադրութիւն չեն դարձներ. դեռ տարիներ առաջ իմ հրատարակած «Բառաքննութեանս» մէջ կարևոր ուղղումներ եմ ըրեր մեր մատենագիրներու վերաբերեալ ու մինչև այսօր ալ նոյն մատենագիրները լոյս կընծայուին նոյն սխալներով։

Այնուհետև պ. Նորայր խօսք բաց արեց պրօֆ. Մառի մասին, յայտնեց իր շնորհակալութիւնը, որ նա միշտ իր աշխատութիւններն ուղարկում է իրան, պատմեց իր ֆրանսահայ բառարանի տպագրութեան մասին և այլն։

Չուզելով խլել նրա պարապմունքներից աւելորդ րոպէներ, մենք պատրաստվում էինք վեր կենալու, երբ նրա բերին սուրճ և քաղցրեղէն։

— Մի աճապարէք, խնդրեմ. ես շատ ուրախ եմ որ կը կարողանամ իմ սիրտը բանալ բարեկամ մարդկանց առաջ. ամեն անգամ կովկասահայ գրագէտի չեմ հանդիպիր։

«Դարդոտ մարդը խօսակից կը փնտրի» — ասել են, և պ. Նորայր սիգարէտները մէկը միւսի ետևից ծխելով ու մեզ հրամցնելով՝ շարունակում էր խօսել։ Նա հետաքրքրական պատմութիւններ արեց Ս. Ղազարից, առանձնապէս Ալիշանից, Քաջունուց, Զարբհանալեանից և շատ ուրիշներից։

Ժամանակը անցնում էր. մենք շարժվեցինք։ Եւ երբ պ. Նորայր լսեց, որ ես դեռ և Վենետիկում մնալու եմ, խնդրեց մի-մի անգամ այցելել իրան։ Ես մեծ հաճոյքով պատրաստակամութիւն յայտնեցի։

Այնուհետև ես գնում էի մենակ, առանց ուղեկցի. և յարգելի հայագէտը արդէն աւելի ազատ էր խօսում Մխիթարեանների մասին և լայն բաց անում իր վիրաւոր սիրտը։

Երկու թէ երեք անգամ էլ նա պատիւ արեց գալ ինձ մօտ փոխ-այցելութեան, նուիրեց իր աշխատութիւններից մի-մի օրինակ։ Նա տնից ուշ-ուշ էր դուրս գալիս, վախենում էր մրսելուց. արևոտ օրերի որոշ ժամերին ես պատահում էի նրան Ս. Մարկոսի հրապարակում «Quadri» սրճարանում։

Մի բան միայն, որ ես ինձ չեմ կարող ներել, այդ այն է, որ ես Վենետիկից մեկնելիս չը կարողացայ «Մնաք բարով» այցելութեան գնալ նրա մօտ. մեր վերջին հանդիպումը եղաւ մեկնելուցս մի քանի օր առաջ, փոքրիկ շոգենաւի մէջ, երբ ես Ս. Ղազար էի գնում, նա Լիդօ։

Ահա լրագրութեան մէջ հրապարակ հանելով իմ ճամբորդական տպաւորութիւններից այս փոքրիկ հատուածը, ես թոյլ եմ տալիս ինձ կոչ անելու Էջմիածնին, որ միջոցներ ձեռք առնի այդ հազուագիւտ մարդուն Կովկաս հրաւիրելու։ Նորայր Բիւզանդացին տնտեսական միջին վիճակ ունի, կարօտ չէ դրամական օգնութիւնների, բայց մենք կարող ենք կարօտ լինել նրա աշխատանքներին։ Եթէ Ս. Ղազարը մոռացութեան է մատնել այդ մարդուն նրա անցեալի նկատումներով, միթէ այդ հանգամանքը կարող է օրինաւոր համարվել և բովանդակ հայ մտաւորականութեան և առաւելապէս կովկասահայ ուսումնական շրջանների համար։

Հարթենք ճանապարհը բոլորովին մենակ մնացած մեծանուն բանասէրի և հայագէտի, հրաւիրենք մեզ մօտ, յարգենք նրան ու փայփայենք գէթ նրա ծերութեան օրերում։

Գ. Լևոնեան

թերթը առանց մի կոպէկի ներկայացնել սրբազանին։ Սակայն տարաբաղդաբար հոգաբարձուն մերժում է ստանում կառավարչից՝ համաձայն փոխարքայի շրջաբերական հրամանագրի, այսինքն՝ Վեհափառ Կաթողիկոսին տրված մի տարի ժամանակամիջոցը հանգանակութիւն կատարելու համար՝ 1913 հոկտ. 1-ին լրանալու պատճառով։

Սօյզադէ

—

Ցխմահմուղը կուլտուրական ճանապարհի վրա

Ցխմահմուղ (Հին-Նախիջ. գ.), 15 յունվ.

Ցխմահմուղցիները, որոնց հետաքրքրում էր միայն գինին ու օղին, այս տարի կարծես զգացել են իրանց սխալը և զարմանում են, որ ուսման նշանակութիւնը լաւ չեն հասկացել, որ և պատճառ է դարձել մեր կրթական գործի անկանոն դասաւորման։ Այս տարի մեր միդասեան դպրոցը վերածվեց երկդասեանի և հրաւիրվեցին արժանաւոր դասատուներ, որոնք ոչ մի ջանք չեն խնայում՝ կրթական գործը բարձր պահելով հանդերձ՝ ժողովրդին դպրոցի հետ կապելու։ Թեմ. տեսուչ Տ. Ռուշտուճեանը երկու անգամ այցելել է մեր դպրոցը և դասեր լսելուց յետոյ՝ բացատրել է ժողովրդին ուսման ու կրթութեան անհրաժեշտութիւնը։ Դպրոցի միաձայն երգեցիկ խումբը յունվ. 5-ին և 6-ին, ղեկավարութեամբ ուսուցիչ Կախեանի, երգեց եկեղեցում շատ աջող, որը մեր եկեղեցում մինչ այդ չէր տեսնված։ Դասատուները տեղացի ոյժերի մասնակցութեամբ ամսիս 6-ին տուեցին ժողովրդ. ներկայացում, որ մեր գիւղում համարեա չը տեսնված բան էր։ Մ. Կիւրեղեան

—

Կեանքը Մեղրում

Մեղրի, 19 յունվարի

Թղթախաղը նոր-նոր նուաճումներ է անում մեր մէջ և խաղացողների թիւը ստուարացնում։ Ցաւալին նա է, որ թղթախաղի երկրպագուների մէջ կան և ինտելիգենտ մարդիկ, նոյնիսկ ընտանիքատէրեր. ինչ օրինակ պիտի վերցնեն այդպիսի ծնողներից նրանց որդիքը։

Ամեն բանի թանգութիւն է. ալիւրի պուդը 1 ր. 80 կ.—2 ր. 10 կ., բրինձինը 2 ր. 60—70 կ., իւղի (մաքուր) ֆունտը 60 կ., պանիր 20 կ., ոչխարի միսը 15 կ., տաւարինը 7—10 կոպ.։

Մեղրիի Մէջ-Թաղի եկեղեցու կաթողիկէի վերին մասը վնասված լինելով, նրա մէջ ժամասացութիւնը դադարեցված է՝ մինչև նրա վերանորոգումը։

Ծննդեան տօներին Մեղրիի դպրոցում կայացաւ տօնածառ հանդէս և մանկական ներկայացում երեկոյթ փոքրերի ու մեծերի համար առանձին-առանձին։ Երգեցիկ խումբը, ղեկավարութեամբ ուսուցիչ Պօղ. Բրօնզարեանի, այդ երեկոյթներին գեղարուեստական հաճոյք է պատճառել հանդիսականներին։

Ուսումնական տարվայ սկզբին մեր գուշակութիւնը, որ ուսումնական տարին ձախող պայմաններում է սկսում, տարաբաղդաբար, զանազան աննպաստ հանգամանքների շնորհիւ, իրողութիւն է դառնում։ Ե. Վ.

—

Գիւղական Նորութիւններ

Ցարսկիէ-Կոլոդցի, 20 յունվ.

Յունվարի 19-ին հայոց դպրոցում կայացաւ ժողով, որը քննեց եկեղեցու, դպրոցի և Կ. Հ. Բ. Ընկ. տեղիս ճիւղի 1913 թ. հաշիւները։

Եկեղեցին 1913 թ. մուտք ունեցել է 386 ր. 38 կ., ծախս 389 ր. 48 կ., առ 1-ն յունվարի 1914 թ. ունի փող 1 ր. 96 կ. և մոմ 2 պ. 1 ֆ.։ Ամբողջ տարում ծախվել է $3^1/_2$ պ. մոմ, պուդից գոյացել է մօտ 100 ր.։ Թումանեանը 13 տարում ծախել էր 13 պ. մոմ։

Ուսումնարանը մուտք է ունեցել անցեալ տարի 440 ր. 15 կ., ծախս 436 ր. 83 կ., առ 1 սեպտ. 1913 թ. դպրոցն ունեցել է փող 3 ր. 32 կ.։

Կ. Հ. Բ. Ընկ. տեղիս ճիւղն ունեցել է՝ մուտք 120 ր. 94 կ., ծախս 111 ր. 88 կ., առ 1 յունվ. 1914 թ. ունի 4 ր. 6 կ.։ Ճիւղը գնել է կազմարարական մեքենաներ՝ գրքեր կազմելու համար։

Ցարսկիէ-Կոլոդցիի հայոց եկեղեցին հիմնվել է 30 տարի առաջ, սակայն այդ 30 տարվայ ընթացքում հաշիւ առաջին անգամ տուեց։ Այստեղ տիրում էր բռնապետական սուլթանական ռեժիմ, որը արհամարհում էր թէ հոգևոր իշխանութիւնը և թէ ժողովուրդը։ Ծխականներն եղել են ճորտեր և ոչխարներ, որոնք չեն համարձակվել հաշիւ պահանջել։ Ժողովրդի գիտակցութիւնը մթագնված էր։ Սակայն արևի ճառագայթները ներս սողացին խաւար մթնոլորտում, և բռնի ռեժիմը տապալվեց։ N. N.

ԱՑԼԱՑՎԱԾ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆ

—

Նոր-Բայազէտ, 18 յունվարի

Մեզանում թէ Նոր-Տարվայ օրը և թէ Ջրօրհնէքի տօնը անցան շատ տխուր, որովհետև ամեն ընտանիք իր հիւանդն է ունեցել այս վերջին ամիսներում և շատերը իրանց հարազատներից զրկվել, զոհ տալով այլ և այլ վարակիչ հիւանդութիւններին, որոնց թւում մեծ տեղ են բռնում սկարլատինան և տիֆը։ Սրանք, յիրաւի, իրանց մեծ զոհերն ունեցան ժողովրդի զանազան խաւերում, մանաւանդ մանուկ հասարակութիւնից, այնպէս որ մինչև 10 տարեկան հասակը տասնեակներով զոհեր տուեցին մեր քաղաքացիք։ Թօրգոմեան եղբայրները, որոնք նոյնպէս զոհ տուին մի երեխայի՝ տարափոխիկ հիւանդութեան, ի յիշատակ իրանց որդու նուիրեցին ծխ. Նորաշէն դպրոցին մի դիւժին թանգագին աթոռներ։

Հիւանդութիւնների տարածման առիթով ծխ. դպրոցի վարչութիւնը ուսուցչուհիների միջոցով շրջեց աշակերտութեան տները և մանրամասն ստատիստիկա կազմելով հիւանդների մասին՝ արգելեց դպրոց յաճախել աշակերտութեան այն մասին, որը մօտ հիւանդներ ունի թէ իր ընտանիքում և թէ իր հարևան ու բարեկամ ընտանիքում։ Եւ դա մի լաւ միջոց է վարակումը մասամբ սահմանափակելու։

Քաղ. ռուսաց ուսումնարանի տեսուչը նոյնպէս ժամանակաւորապէս արգելեց հիւանդ ունեցող աշակերտներին դպրոց յաճախել։

Բոլոր հիւանդները զուրկ են օրինաւոր բժշկութիւնից, քանի որ գաւառական բժիշկը յաճախ իր ծառայական գործերով բացակայ լինելով քաղաքից, հիւանդները մնում են միակ ֆելդշերի խնամքին ենթարկված, որը, պէտք է ասած, սիրով այցելում է հրաւիրողների հիւանդներին և իր կարեաց չափ օգնութիւն հասցնում։

Աչքի է ընկնում քաղաքային սեփական բժիշկ ունենալու կարիքը։ Մեր քաղ. վարչութիւնը ամեն գնով պիտի աշխատի բժիշկ ունենալ։

Ուրախութեամբ պէտք է յիշել, որ երբ անցեալ ամառ փոխարքայի օգնական սենատոր Վատացին անցաւ մեր քաղաքից, քաղ. ււագ Արծրունին խնդրեց միջնորդել մի հիւանդանոց հիմնելու մեր քաղաքում, որպէս զի ժողովրդի աղքատ դասակարգը միջոց ունենայ օգտվելու այդ հիմնարկութիւնից ձրիապէս։ Եւ ահա, ինչպէս լսվում է, կարգադրված է մեր քաղաքում հիմնել մի գիւղական բուժարան իր բժշկով, ֆելդշերով և մանկաբարձուհով, որով և քաղաքի հասարակութիւնը կարող է ձրիապէս օգտվել թէ բժշկից և թէ դեղերից։ Դա է միակ մխիթարականը առ այժմ մեր քաղաքի համար, որը գլխովին համակված է այլայլված տրամադրութեամբ։

Որսորդ

Յ. Գ.—Նամակս դեռ չը կնքած՝ վախճանվեց տեղական վաճառական Ղարիբ Բուռնութչեան, որը, ինչպէս լսեցի, պատուիրել է իր ժառանգներին նուիրել հայոց ծխ. դպրոցին 100 ռուբլի։ Ո.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

◆ Կովկասի փոխարքան շնորհակալութիւն է յայտնել երկաթուղային հիւանդանոցի բժշկական մարմնին յունվ. 13-ին աւազակների գնդակներից վիրաւորված ոստիկաններին ուշադիր վերաբերմունք և խնամք ցոյց տալու համար։

◆ Կովկասեան ուսումնարական շրջանի հոգաբարձու Ռուդոլֆի նախագահութեամբ կայացաւ պոլիտեխնիկումի գլխաւոր կոմիտէի ուսումնական մասնաժողովի նիստը, որի շարունակութիւնը նշանակված է այսօր։

◆ Թիֆլիսի, Գանձակի և Երևանի նահանգապետների նախագահութեամբ ներկայումս հաստատված կայ մասնաժողովներ այդ նահանգների սահմանները կանոնաւորելու համար։

◆ Թիֆլիսի մանր մսավաճառները մի հաւաքական խնդրագիր են ներկայացրել նահանգապետին, որի մէջ յայտնում են, թէ մսի թանգութեան պատճառներից մինն էլ այն է, որ բոլոր մսավաճառները, որոնցից իրանք միս են գնում, կամայականօրէն վերջերս մսի արժէքը բարձրացրին մինչև 6 ր. պուդը։ Այնպէս որ իրանք՝ մանր մսագործները անկարող են ծախել մսի ֆունտը 13 կ., մինչդեռ իրանց նստում է ֆունտը 16 կ.։ Ահա այդ չարիքի վրա են մատնանշում մանր մսավաճառները իրանց խնդրագրում և խնդրում են նահանգապետից միջոցներ ձեռք առնել իջեցնելու խոշոր մսավաճառների բարձրացրած գները, որպէս զի ազգաբնակութիւնը հնարաւորութիւն ունենայ ամբողջ քաղաքում միսը գնել սահմանված սակագնով։

◆ «Тифл. Лис.»-ի ասելով, յունվ. 22-ին կոմս Ի. Ի. Վօրոնցով-Դաշկովի և կոմսուհի Ելիզավէտա Անդրէևնայի ամուսնութեան 47-րդ տարելիցի օրը, Վրաստանի էկզարխը մաղթանք կատարեց պալատական եկեղեցում։ Պատարագին ներկայ էին կոմսը և կոմսուհին, փոխարքայի օգնական հօֆմէյստէր Պետէրսօնը կնոջ հետ, շքախմբի անձինք և այլն։ Մաղթանքից յետոյ կայացաւ նախաճաշ։

◆ Այսօր, երեկոյեան ժամը 8-ին, նշանակված է Հայոց Ազգագրական Ընկերութեան հրապարակային նիստը նոյն ընկերութեան գրադարան-թանգարանի դահլիճում։ Փիլիսոփայութեան դոկտոր Բ. Իշխանեան դասախօսելու է հետևեալ նիւթի մասին. «Կովկասեան ժողովուրդների տերրիտորիալ բաժանումները և պրօֆեսիոնալ-հասարակական կազմը»։ Բացի ընկերութեան անդամներից կարող են ներկայ լինել և հրաւիրված կամ նախապէս հրաւիրատոմս ձեռք բերած անձեր։ Աշակերտների համար մուտքը արգելված է։

◆ Վաղը, առ. ժամը 11-ին տեղի կունենայ Թիֆլիսի ժուրնալիստների ընկերութեան անդամների ընդհանուր ժողովը (Միքայէլեան փող. տ. № 100)։ Առանձին հրաւիրագրեր չեն լինելու։ Օրակարգն է 1) նոր անդամների ընդունելութիւն, 2) հաշւի քննութիւն և 3) պաշտօնական անձանց ընտրութիւն։ Վերջում կը լինի խորհրդակցութիւն սեփական լրագիր հրատարակելու հարցի մասին։

◆ Վաղը, Հայոց Գիւղատնտ. և Տնայն. Ընկ. մէջ, երեկոյեան ժամը 7-ին կայանալու է ամսիս 18-ի ընդհանուր ժողովի շարունակութիւնը, որի ժամանակ քննութեան են առնվելու այն մի շարք առաջարկները, որոնք բղխում են գիւղատնտես Աւ. Սահակեանի արած զեկուցումից։ Ապա երևանեան նահանգի տնտեսական և հողային դրութեանը ծանօթ երդ.-հաւ. Գաբրիէլ Մնացականեան կարդալու է մի հետաքրքրական զեկուցում մեր երկրի տարբեր գօտիների հրատապ կարիքների մասին։ Երկու զեկուցումներն էլ, վերաբերելով մեր հայրենիքի ժամանակակից տնտեսական հրատապ կարիքներին, անշուշտ կը գրաւեն թէ անդամների և թէ կողմնակի հետաքրքրվողների ուշադրութիւնը։ Ընդհանուր ժողովը տեղի կունենայ Ներսիսեան դպրոցի նախկին շինութեան մէջ։

◆ Վաղը, կիրակի, ամսիս 26-ին, Թիֆլիսի հայ-կաթոլիկների առաջնորդարանի հիւրասենեակում, ճաշնաւոր պատարագից յետոյ, կայանալու է երկրորդ և վերջին ընդհ. ծխ. ժողով, ուր կը քննվի 1913 թւի ելևմուտի ընդհանուր հաշիւը։

◆ Երկուշաբթի օրը, յունվարի 27-ին, Արքունական թատրոնում լինելու է օպէրային ներկայացում յօգուտ հայուհեաց «Մեղու» ընկերութեան։ Խաղացվելու է «Րիգօլէտտօն»։

◆ Վաղը տեղի է ունենալու «Կոպէկ» ընկերութեան վարչութեան կազմած հետաքրքրական պարահանդէսը։

◆ Թիֆլիսի կանանց բարձր դասընթացքների բոլոր ամբիոնները կենդանաբան Մէյէրի գալստեամբ (Կազանի համալսարանի պրօֆէսօր) արդէն գրաւված են պրօֆէսօրներով և պրիվատ-դօցենտներով։

◆ Երկրագործութեան գլխաւոր կառավարչի լիազօր Շաշկօվսկին մեկնեց Սև-ծովի ափը։

◆ Վաղը ժող. համալսարանի ընկերութեան նախաձեռնութեամբ Ժողովրդական Տանը Պալմօվը դասախօսելու է ռուս բանաստեղծ Նեկրասովի մասին։

◆ Անցեալ օրը Թիֆլիսում Թամամշեանի բաղնիքը մտաւ գեղջկուհի Ե. Գուբանովան իր 6 տարեկան աղջիկ Անտօնինայի հետ։ Երբ մայրը իր հետ բերած կեղտոտ լուացքն էր լուանում, նրա աղջիկը անզգուշութիւնից ընկաւ աւազանը (2 արշին խորութեամբ) և խեղդվեց։ Մայրը չը յայտնելով այդ մասին ոչ ոքի՝ փաթաթել է աղջկայ դիակը սպիտակեղէնի մէջ և կառքով տուն տարել։

◆ Յուն. 23-ին, համաձայն ոստիկանական տեղեկութեան, երեկ. ժամը 6 և 15 րոպէին, Վօրօնցօվսկայա փողոցում № 32 տան մօտ, պարսկահպատակ Իսմայիլ Սահիփ-օղլին փողոցի մի կողմից միւսն անցնելիս այն րոպէին, երբ էլեքտրաքարշի № 48 վագոնն էր անցնում, (վատման Յովհաննէս Բալօյեան և կոնդուկտօր Նեստոր Ջիօվլիշվիլի) վագոնը ոյժով հարուածեց նրան և շպրտեց մի կողմը, ջարդելով ամբողջ մարմինը։ 15 րոպէ չանցած, նա, ուշքի չը գալով, մեռաւ։ Դիակը ուղարկվեց Միքայէլեան հիւանդանոցը։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՎՐԱՑ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

—

◆ Կուլտուրական սիրողների վրաց ընկերութեան վարչութիւնը իր վերջին ժողովում որոշել է վրաց պատմութեան և գրականութեան ուսումնասիրութիւնը մատչելի անելու նպատակով Թիֆլիսում հիմնել հանրամատչելի դասընթացքներ։

◆ Կ. Ղիփիանիի յոբելեանական կոմիտէն Վրաստանի զանազան անկիւններից ստանում է յոբելեանին մասնակցելու ցանկութիւն յայտնողների բազմաթիւ առաջարկներ և դրամական նուէրներ։

◆ Ամսիս 21-ին Քութայիսում, ըէալական դպրոցի աշակերտ Պատ. Գօգաձէին, երեկոյեան պահին տուն վերադառնալու ժամանակ, շանտաժիստները յարձակվել են և փախցրել։ Գօգաձէի փրկութեան համար շանտաժիստները նրա ծնողներին ներկայացրել են 15,000 ռուբլու պահանջ։

◆ Առաջիկայ գարնան, ինչպէս յայտնի է, Լայպցիգում բացվելու է փորագրական և տպագրական աշխատանքների ցուցահանդէս, որում յատուկ տեղ է յատկացվելու նաև սեփական բաժնին։ Ցուցահանդէսը կազմակերպող վարչութեանը ուղղված այն հարցին, թէ կարող են արդեօք վրացիները եւս մասնակցել, պրօֆ. Բրօկկէլմանը հարց տուող Մարգվելաշվիլին տուել է դրական պատասխան և առաջարկը ընդունել համակրութեամբ։ Հեղինակը հրաւիրելով Վրաց մէջ Գրագիտութիւն Տարածող և Պատմա-Հնագիտական Ընկերութիւնների ուշադրութիւնը՝ առաջարկում է օգտվել դէպքից և ժամանակին ցուցահանդէսի վարչութեանը ներկայացնել կարևոր նիւթերը։ («Սախ. Գ.»)

◆ Լոյս է տեսել վրացերէն լեզուով վրացի բեմական գործիչ՝ յոբելեար Ղիփիանիի կենսագրութիւնը։

ՄԱՄՈՒԼ

Ստացանք Ռոստովում հրատարակվող «Գաղութ» գրական, քաղաքական և հասարակական նոր շաբաթաթերթի առաջին համարը։

«Երկու խօսք» խմբագրական յօդուածի մէջ, նոր շաբաթաթերթի խմբագրութիւնը, խոստովանելով հանդերձ որ Նոր-Նախիջևանում և Ռոստովում արդէն հրատարակվում են երկու այլ շաբաթաթերթեր՝ «Լոյս» և «Գրիչ», ուստի և գուցէ շատերը աւելորդ գտնեն մի երրորդ թերթի հրատարակութիւնը, յայտնում է, որ այնու ամենայնիւ ձեռնարկում է նոր շաբաթաթերթի հրատարակութեան, հաւատացած լինելով որ իւրաքանչիւր նոր թերթ, մանաւանդ անկախ թերթ, կարող է և ընդունակ է նպաստել հասարակական կեանքի զարգացման։ Ուստի և անկախ թերթ ստեղծելու ցանկութիւնը համախմբել է երիտասարդներին «Գաղութի» շուրջը, նպատակ դնելով աշխատել, ոյժերը ներածին չափ, լուսաբանել Հիւսիսային Կովկասի, Ղրիմի և Ռուսաստանի հայ գաղութի տեղական կեանքը և նրա բազմապիսի կարիքները, քննել և վերլուծել հայ գիւղացիութեան անծայր կարիքներն և ցաւերը, աւելի սերտ կապեր հաստատել գաղութի ու մայր հայրենիքի միջև և գաղութի հայութիւնը մասնակից անել բուն հայրենիքի վշտերին և ուրախութիւններին։

Անկեղծօրէն ցանկանում ենք, որ իրագործվի այդպիսի մի՝ թէև դժուարին նպատակ։ Դա կախված կը լինի ձեռնարկող երիտասարդների եռանդից և կորովից։ Բայց միաժամանակ ցանկանում ենք, որ նոր շաբաթաթերթը կարողանայ անկախ պահել իրան և ոչ միակողմանի, իսկ այդպիսի միակողմանիութիւն կարելի է նկատել (գուցէ պատահական է) «Հայկական կեանք» բաժնի մէջ, ուր լուրերը ամբողջովին քաղված են միայն մի թերթից և որը կարող է առիթ տալ զանազան տարաձայնութիւնների...

*

Լոյս տեսաւ «Տարազ» պատկերազարդ հանդէսի № 1-ը (յունվարի համարը)։

«Տարազը» մտնում է իր գոյութեան XXV-ամեակի մէջ։

Համարը կազմված է շքեղ, գեղեցիկ։ Ուշադրութեան արժանի են նորոգ հանգուցեալ դօկտոր Աւ. Բաբայեանի լուսանկարները, տպված զանազան դրութիւնների մէջ, ինչպէս և Մաքսիմ Գորկիի մեծ պատկերը, ինքնաձեռագիր ստորագրութեամբ, նուիրված Տ. Նազարեանին։ Գրական բաժնի մէջ ուշադրութեան արժանի է Խաչատուր Աբովեանի «Թիֆլիսի հայոց հանգստարանը» վերնագրով մինչև այժմ անտիպ մնացած մեծ յօդուածը, որից ուղղակի «Վէրք Հայաստանիի» ոճի համն ու հոտն է փչում։

«Տարազը» մնում է մեր միակ գեղարուեստական շքեղ պատկերազարդ ամսագիրը։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

ԿՈՉ

(„Союзъ Копѣйки" ընկերութիւնից)

—

Անցնելով փողոցներով և հանդիպելով ցնցոտիների մէջ պարուրված, կեղտի մէջ կորած, մերկ ու քաղցած մանուկների, որոնք վազում են անցորդների ետևից և նրանց սիրտը մորմոքում իրանց աղեխարշ ձայնով, հաց և դրամ խնդրելով, մեզ համար պարզ պիտի լինի, թէ ինչ կը լինէր այդ անցորդների դրութիւնը, եթէ փողոցի բոլոր մանուկները, ապաստարանների բոլոր սաներն ու բարերարեալները դուրս նետվէին Թիֆլիսի փողոցները։ Չէ որ այն ժամանակ քաղաքի բնակչութիւնը պիտի բառիս բուն նշանակութեամբ տանջանքների ենթարկվէր այդ անվերջ ու սրտաճմլիկ ձայներից։ «Պարօն, մի կոպէկ տուէք, պարօն, մի կոպէկ տուէք, պա-ա-րօն, մի կոպէկ տուէք»—և այսպէս ամեն մի փողոցում, ամեն մի անկիւնում, իւրաքանչիւր խանութի մուտքի մօտ, եկեղեցիների դռանը, միով բանիւ՝ ամենուրեք։

Պատկերացնենք մենք այդ տեսարանը և մտածենք, թէ իրօք որքան կարճատես և անշնորհակալ է քաղաքաբնակը, երբ գանգատվում է, թէ բարեգործ տիկինները ձանձրացրել են նրան տոմսեր առաջարկելով։

Եւ իսկապէս, ո՞րն է աւելի հեշտ—գործ ունենալ մի տասնեակ մաքրազգեստ, գեղեցկադէմ տիկինների հետ, թէ՞ ամբողջ բանակ մերկ ու քաղցած երեխաների, որոնք, ինչ էլ որ լինի, ուտել են ուզում և որոնք այդ պատճառով անտանելի «կըպչող» են։

Արդ, բարեմիտ եղիր, քաղաքաբնակ, և մի մերժիր օգնելու «գլուխ տանող» տիկիններին, որովհետև նրանք, մեր կարծիքով, ազատում են քեզ եգիպտական ամենաանտանելի պատիժներից մէկից, այն է՝ փոքր երեխաների եգիպտական անծայր չքաւորութիւնն ու տանջանքը դիտելու անհրաժեշտութիւնից։ Ինչքան էլ հասարակութիւնը պարտաւոր լինի, ինչքան էլ թեթևամիտ, էլի չի կարող, չի յանդգնի, չի ցանկայ տեսնել, որ իր աչքերի առաջ քաղցից ու ցրտից մեռնեն փոքրիկ, անպաշտպան և անմեղ մանուկներ։

«Союзъ-Копѣйки» ընկերութիւնը յունվարի 26-ին Արտիստական Ընկերութեան շէնքում երեկոյթ է տալիս՝ համերգային բաժնով։

Այդ երեկոյթը պէտք է 70 մանուկ երեխաների սննդի դրամը հայթայթէ։

Մենք յոյս ունենք, որ Թիֆլիսի հասարակութիւնը ի շնորհակալութիւն այն բանի, որ 70 երաժիշտ չեն տանի իր ականջները քաղաքի բոլոր փողոցներում և անկիւններում, հարուածելով նրա ներվերը, բաւականութեամբ կերթայ ընկերութեան երեկոյթը, և երեկոն հաճոյալի կը լինի նրա համար, մանաւանդ որ ընկերութեան երեկոյթները հետաքրքրաշարժ և բազմատեսակ ծրագրով են կազմակերպվում։

Վարչութիւն

ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Փօթի, 10 յունվ.

Փօթիի հայոց եկեղեցու հոգաբարձութիւնը իր սրբազան պարտականութիւնն է համարում յայտնել իր ամենախորին շնորհակալութիւնը հանգուցեալ Մկր. Գաբր. Ալխազեանցի ժառանգներին, որոնք յարգելով հանգուցեալի կամքը՝ սիրայօժար ի կատար ածեցին նրա կտակը ներկայացնելով Փօթիի հայոց կուլտուրական-լուսաւորական բոլոր հաստատութիւններին կտակած գումարը 1700 ռուբլի։

Նախագահ հոգաբարձութեան՝
Ա. Ապրէլեան

—

Թիֆլիս, 23 յունվ.

Հայոց Ազգագր. Ընկ. խորհուրդը խորին շնորհակալութիւն է յայտնում Թաւրիզի Կենտրոնական դպրոցի ուսուցիչ պ. Սենեքերիմ Տէր-Յակոբեանին, որ բերեց Ընկերութեան Ազգագրական Հնագիտական Թանգարանի համար Ատրպատականի հայոց կանանց երեք ձեռք զգեստներ, շատ հին տարազի։ Շնորհակալութիւն նաև տիկին Ժօրժին, որ աջակցել է այդ զգեստները ձեռք բերելում, և բոլոր նուիրատուներին։

Նախագահ՝ Ա. Մելիք-Ազարեան
Անդամ-քարտուղար՝ Ե. Լալայեան

ՎՈՍՓՈՐԻ ԱՓԵՐԷՆ

Վար առէք դիմակները

Կ. Պոլիս, 9 յունուար

Անշուշտ «Մշակի» ընթերցողները պիտի ներեն, որ ակամայ արգիլուած ըլլալով աշխատելէ՝ չկրցայ, երկու ամսով, փութալու պատասխանել բոլոր այն գրութիւններուն, որոնք Զաւարեանի մասին իմ գրածներուս ի պատասխան կարգ մը մարմիններ և անհատ գրած էին։

Դիտել տալ աւելորդ չըլլայ թէ 1913 դեկտ. 12-ի (№ 278) «Հորիզոնի» մէջ Խաժակի և դեկտ. 14-ի (№ 278) «Մշակի» մէջ Կեդրոնական վարժարանի խնամակալութեան պատասխան-չքմեղանքները հրապարակուելէն յետոյ, Հ. Առաքելեան արդէն 15 դեկտ. (№ 279) «Մշակի» մէջ, «թողնելով ինծի «պատասխանել ըստ էութեան», ինքը փութացած էր մատնանիշ ընելու երկու հերքումներուն բացարձակապէս անարժէք ու ողբալիօրէն հակասական ըլլալը։

Ասոր վրայ աւելցնելով նաև «Հորիզոնի» պռոշտուքներուն իբր պատասխան իմ մէկ թղթակցութիւնս, որ «Մշակի» մէջ հրատարակուեցաւ (դեկտ. 17, № 280), արդէն բաւականէն աւելի էին այդ հերքումներուն արժէքը ճշդելու։

Մասնաւորապէս Զաւարեանի ինքնագիր նամակը անհերքելի փաստ մըն էր, թէ խնամակալութիւն և Խաժակ ինչպէս անպատկառօրէն սուտ կը խօսէին։

Այս երկու պատասխաններէն յետոյ թերևս աւելորդ համարուէր նոր պատասխան մը, սակայն ես անհրաժեշտ համարեցի երկու բառ ևս աւելցնել նախորդներուն վրայ, հանրային ու հասարակական գործիչներու բարոյականին որքան խանգարուած ըլլալը ցոյց տալու համար։

⁂

Նախ չպիտի կրնամ իմ զարմանքս յայտնելէ հրաժարիլ այն հերքումին համար, որ Միացեալ Ընկերութեան տնօրէն խորհուրդը փութացած էր հասցնելու (տես «Մշակ» № 287)։

Ոչ ոք կրնայ Միացեալը դատապարտել Զաւարեանի թեկնածութիւնը մերժած ըլլալուն համար։

Ամեն հաստատութիւն իր օրէնքն ունի, Միացեալն ալ իրը. և անոր մէջ անհրաժեշտ է, որ Միացեալի պաշտօնեան միայն Միացեալի գործերով զբաղի, այլ ոչ թէ զանազան կուսակցութեանց, հետևաբար աւելորդ փութկոտութիւն մըն էր Միացեալին կողմէ տրուած հերքումը, որ կը հաստատէր, թէ Զաւարեան դիմում ըրած էր, սակայն կուսակցութեան գործերէն հրաժարած չըլլալուն համար մերժուած էր։

Միացեալը իր իրաւունքին մէջ էր. ասիկա անտարակուսելի է։

Միացեալին իր կանոնները յարգելն այդ մարմնոյն դէմ դատապարտութեան մը առիթ դարձնելու համար մարդիկ «Բագուի Ձայնի» չափ իրենց քիթէն ծայրէն անդին չճանչցող կամ «Հորիզոնին» չափ փաստերը խեղաթիւրող ըլլալու են։

Եւ մենք կը կարծենք, թէ այդքան միամիտ մարդիկ չկան ազգին մէջ։

⁂

Գալով Կեդրոնականի խնամակալութեան հերքումին, զայն կարդացող մը՝ եթէ կարդացած ըլլար նաև Խաժակի գրածը, շուտով պիտի համոզուէր, թէ այդ երկու գրութիւններն ալ մէկ ձեռքէ և մէկ կաղապարէ ելած են։ Խաժակ ոչ միայն աշխատած է ինքզինքն արդարացնել, այլ նաև ուզած է իր [illegible] փրկել նաև իր ընկեր Զարդարեանը... Կը կարծեմ թէ զուրկ է գրիչ բռնելու շնորհէն և երկու տող բան չէ կրնար գրել՝ ինքզինքն արդարացնելու համար։

Ասիկա շատ պերճախօս փաստ մըն է կարծեմ հաստատելու համար բովանդակ աղտոտութիւնը այս տեսակ մարդոց, որոնք գոնէ իրենց դիմակազերծ ըլլալէն ալ չեն վախնար և գործիք ըլլալով մի ուէ Զարդարեանի ձեռքը՝ կը կարծեն, թէ լեռ լեռան վրայ կը դնեն։

Բարեխիղճ Գ. Խաժակ պէտք է գոնէ զգուշանար այդ հերքումին մէջ սպրդեցնելէ այնպիսի բացատրութիւններ, որոնք ոչ թէ մեր հերքումին կարօտէին, այլ իր «մտերիմ և հին ընկերին»՝ Սիմէօնի գրչով իսկ չհերքուէին։

Գ. Խաժակ կը պնդէ թէ «Նրա ունեցած դասերին ես երբէք թեկնածու չեմ ներկայացել ոչ մանկանից առաջ, ոչ էլ մահվանից յետոյ»։ Սակայն քիչ յետոյ ինքը կը խոստովանի, թէ դիմում էր ըրած Կեդր. վարժարանի խնամակալութեան մօտ՝ ստանձնելու համար Շանթի թողած դասերը, երբ արդէն իրմէ առաջ ուրիշ շատեր թեկնածու ներկայացած էին։

Ասոնց մէջ էր նաև Ս. Զաւարեան, որ ինքն իր նամակով կը յայտնէ, թէ խնդիրք ներկայացուցած է, հոգ չէ թէ բերանացի ըլլայ ասիկա՝ Խաժակի խօսքովը։ Լ. Սեղբոսեան (Շանթ) Զաւարեանը յանձնարարած ըլլալով հանդերձ ինչ զարմանալի գաղտնիք է, որ Զաւարեան այդ պաշտօնին չի կոչուիր և Գ. Խաժակի հրաւէր կըլլայ պաշտօն ստանձնելու։

Գ. Խաժակ, որ այնքան սերտ յարաբերութիւն ունի «Ազատամարտի» հետ, կրնա՞յ ըսել թէ նոյնիսկ այդ լրագրի մէջ հրատարակուած Ներսէս Օհանեանի սա տողերը որու համար էին կամ ով կակնարկէին։

«Ինծի համար գաղտնիք մը չէ դժբաղդաբար թէ՝ գտնուեցան անխիղճ պաշտօնական և ոչ-պաշտօնական մարդիկ, որոնք նոյնիսկ Զաւարեանի դասախօսութիւններուն ալ արգելք ըլլալով և կամ աչք տնկելով՝ ամեն ջանք գործ դրին, պատառ մը չոր հացի փոխարէն եղող այդ միջոցէն ալ զրկելու զինքը։

«Թող այժմ երջանիկ ապրին այդ անխիղճները»։

Դարձեալ մեզի կրնա՞ն ըսել, թէ Զաւարեանի նամակին սա տողերը, թէ «որովհետև խուժանի հետ միասին նաև շատ կըրթւածներ մարդոց արժանիքը ճշդում են ամեն մէկի բարձրացրած աղմուկով (զանազան ձևերի), վախնամ, որ իմ արժանիքները էլ չափվեն... իմ լռութեամբ», — որո՞ւն համար են գրուած։

Այդ աղմուկ բարձրացնողները, որոնք իրեն ընդդիմադիրի դեր ստանձնած ըլլալը Զաւարեան կերևայ թէ կռահած էր, արդեօք որո՞նք են։ Ասոնց պատասխանները շատ շահեկան է ստանալ նոյնիսկ Գ. Խաժակի բերնէն, որ պարապ տեղը յոգնութիւն յանձն առած էր բացատրելու համար թէ ինքն ինչպէս Սամաթիոյ տեսուչ անուանուած է և թէ քանի բուլի թոշակ կը ստանայ։

Գ. Խաժակ կը հերքէ նաև Զաւարեանի տեսչական պաշտօնի համար թեկնածու ներկայանալը, և Զարդարեանի մասնակցութիւն չունենալը հաստատելու համար կը հաստատէ, թէ անիկա Պարտիզակ էր։

Պարտիզակը Չինաստան չէ, և թղթակցութիւններով Ռ. Զարդարեան շատ լաւ կըրնար ծառայել քալեցնելու Գ. Խաժակի կառքը ի վնաս խեղճ Զաւարեանի։

Կեդրոնականի խնամակալութիւնը՝ հակառակ իր պաշտօնական դիրքին՝ Զարդարեանի տուն տուած ճաշովը կը փութայ Խաժակին օգնութեան հասնիլ՝ ա) հերքելով Զաւարեանի թեկնածութիւնը տեսչական և բ) քաղաքական տնտեսագիտութեան դասերուն համար։

Ս. Զաւարեանի նամակին տողերը շատ պերճախօսօրէն կը դատապարտեն Կեդրոնական վարժարանի անբարեխիղճ խնամակալութիւնը և անոր բարոյական սնանկութեան վճիռը կուտան։

Կարդանք անգամ մըն ալ այդ տողերը։

«Երկու տարուց ի վեր ես կը դիմեմ Կեդր. դպրոցի խնամակալութեան՝ խնդրելով դասեր պատմութիւնից, բնագիտութիւնից, քաղաքատնտեսութիւնից։ Ազատ դասեր չը կային։

«Այժմս բաց են թէ ընդհանուր պատմութեան, թէ քաղաքատնտեսութեան դասերը։ Ազատ է և տեսչի պաշտօնը (Ահարոնեանի հրաժարումով)։ Խնդիրք ես ներկայացրած եմ խնամակալութեան»։

Ո՞վ է ուրեմն, որ սուտ կը խօսի։ Զաւարեա՞ն.—Բնաւ երբէք։ Խնամակալութիւնը.—Անվրէպ։

Ամօթ է, պարոններ։

Ազգային գլխաւոր կրթական հաստատութեան դուք վարիչները, դուք խնամակալներն էք և սուտ կը խօսիք, սուտ անպատկառ։ Վար առէք ձեր դիմակները, մի արատաւորէք ձեր աթոռները։ Դուք անարժան էք ոչ թէ դպրոց վարելու, այլ նոյն իսկ անոր սեմէն ներս ոտք դնելու։

Ձեր յաջորդ տողերուն բնական է թէ այլևս ոչ մէկ հաւատք կրնանք ընծայել, ոչ մէկ վստահութիւն կրնանք ունենալ։

Մէկ անգամ ստողը հարիւր անգամ ալ կրնայ ստել։

Ուստի մեզ համար առասպելի մը չափ ալ կարևորութիւն չունին ձեր միւս պատճառները պատմութեան դասին համար։

Սակայն պէտք չէ թող տալ ձեր օձիքը։

Դուք պ. Մեսրոպեանի պաշտօնէ հրաժարելէ յետոյ՝ Խաժակը պաշտօնի կոչելու պատասխանատուութիւնն ալ ձեր վրայէն կը նետէք նոր տեսչին՝ Ա. Խաչատուրեանի վրայ։ Սակայն արդեօք որո՞ւն վրայ պիտի նետէք այն պատասխանատուութիւնը, որ տեսչի ընտրութեան պահուն դուք ստանձնած էք՝ Զաւարեանէն նախապատիւ համարելով Խաչատուրեանը։

Անոր պատճառը արդեօք ո՞վ է։ Ապահովաբար Ռ. Զարդարեան, այնպէս չէ՞։

Սպասելով հանդերձ Ա. Խաչատուրեանի բացատրութեան, թէ ինչո՞ւ նախընտրեց Գ. Խաժակը, պարոնայք խնամակալներ, նոր սուտեր թխեցէք և երևան եկէք մեզի ըսելու համար, թէ ինչպէս նախընտրեցիք Խաչատուրեանը Զաւարեանի վրայ, տեսչական պաշտօնի համար, երբ հիմա ապացուցուած թէ Զաւարեան թեկնածու ներկայացած է նոյն պաշտօնին համար։

Վար առէք դիմակները, անամօթներ։

⁂

Այս խնդրոյն համար խնամակալութեան վաւերական անդամներէն մէկը, առանց գիտնալու իմ հանգամանքս, որոշ յայտարարութիւններ ըրաւ, որոնցմով Խաժակ կը մտնէ ծանր ամբաստանութեանց տակ։

Անիկա պատմեց ինծի բոլոր այն դաւերն, որոնք խաղցուեցան Զաւարեանի ընտրութիւնը վիժեցնելու համար։

Այս բերանացի յայտարարութիւնները երբ պահանջեցի գրաւոր տալ, վարանեցաւ։

Պնդումներուս վրայ նոյնիսկ խոստացաւ, սակայն մինչև հիմա այս խոստումը չգործադրեց, անշուշտ իր ընկերները դիմակազերծ ընելու քաջութենէն զուրկ ըլլալով։

Իր յայտարարութիւնները հաստատելու համար ուրիշ վաւերագիր մը չունենալու համար տրամադրելի՝ ես չեմ ուզեր հրապարակութեան տալ... միշտ սպասելով, որ այդ պարոնը քաջութիւն ունենայ իր ըսածները— որոնց ճշգրտութեան համոզուած եմ— իր ստորագրութեան տակ, կամ ուրիշ վաւերագիրներով հաստատելու։

Շաւայլ

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԵՐՈՒՄ

Ռուսաց առաջադէմ մամուլը վաղուց է այն միտքը յայտնել, որ մեր կառավարութեան ազդեցութիւնը արտաքին քաղաքականութեան գործերում շատ թոյլ և աննշան է։ Եւ, յիրաւի, Ռուսաստանի ջանքերով ըստեղծված սլաւօնական միութիւնը խորտակվեց Աւստրիայի և Գերմանիայի ինտրիգաներով, և Ռուսաստանը չը կարողացաւ փրկել՝ իր շահերի համար շատ կարևոր սլաւօնական ազգերի դաշնակցութիւնը։ Հայկական խնդրումն էլ Գերմանիան գրեթէ ոչնչացրեց ռուսաց ծրագիրը, ըստ իր ցանկութեան ձևակերպելով մինիմումի հասցրեց նրան, և եթէ եւրոպական կոնտրոլի խնդիրն էլ մինչև այժմ ձգձգվում է Թիւրքիայի կողմից, դա արվում է Գերմանիայի գաղտնի թելադրութեամբ։ Այդ մեր արտաքին քաղաքականութեան թուլութեան պատճառները՝ մեր երկրի ներքին հանգամանքների մէջ պէտք է որոնել։ Ամեն մի զարգացած մարդու համար պարզ է, որ այն պետութիւնը միայն կարող է ուժեղ քաղաքականութիւն ունենալ և զօրեղ լինել, որի կառավարութիւնը վայելում է իր ժողովրդի մեծամասնութեան համակրութիւնն ու վստահութիւնը և երբ երկրի ներսը գոհունակութիւն է տիրում։ Իսկ այն պետութիւնը, որի ժողովրդի քաղաքական, տնտեսական ու կուլտուրական հասունացած կարիքները գոհացում չեն ստանում և տարիների ընթացքում մնում են անկատար՝ խոստացված բարենորոգումները, միշտ թոյլ կը լինի իր արտաքին քաղաքականութեան մէջ։ Այս հանգամանքի նշանակութիւնը այնքան մեծ է, այնքան պարզ, որ Եւրոպան շատ լաւ հասկանում է, թէ ինչու Ռուսաստանը ճգնաժամի միջոցին չի կարողանում Բեռլինի, կամ նոյնիսկ Վիէննայի լեզուով խօսել։ Նոյնն է նկատվում և պատերազմի ժամանակ։ Երբ Անգլիան պատերազմում էր բուրերի հետ, նրա դաշնակիցները անգամ— աւստրալիացիք, կանադացիները, հնդիկները—խանդով կռւում էին անգլիացիների շարքերում. իսկ ճապօնական պատերազմի ժամանակ և անմիջապէս յետոյ մեր երկիրը խռովութիւնների ու յեղափոխական շարժումների ասպարէզ դարձաւ։

Մեր այս ներքին անբարեկարգութեան, ներքին, քաղաքական կեանքի անհաստատութեան պատճառով, Անգլիայի պէս առաջադէմ մի պետութիւն զգուշանում է, չէ վստահանում Ռուսաստանի մերձեցմանը։ Մինչդեռ Գերմանիայի համար մեր երկրի ներքին անբարեկարգութիւնը՝ ձեռնտու է։ Գերմանիան ցանկանում է, որ Ռուսաստանում յետադիմական հոսանքը միշտ զօրեղ լինի, որ երկիրը չը վերանորոգվի, չուժեղանայ ռեֆօրմներով։ Բացի այս՝ Պետերբուրգի բիւրօկրատիան չի կարողանում ազատվել Բեռլինի ճանկերից, և Կոկովցեւը ու Սազոնովը Պարիզ գնալուց միշտ մտնում են Բեռլին, Վիլհելմի մօտ ճաշելու։ Բեռլինի և ռուս-բիւրօկրատիայի այս փոխադարձ կոկէտութիւնը չէ կարող վրիպել, ի հարկէ, Մեծ Բրիտանիայի պետական գործիչների իմաստուն տեսողութիւնից։ Այս է պատճառը, որ Անգլիան շատ խնդիրներում հաւանութիւն չէ տալիս Ռուսաստանի հայեացքներին, եռանդուն աջակցութիւն չէ ցոյց տալիս Ռուսաստանի գործողութիւններին Թիւրքիայում կամ Պարսկաստանում։ Գուցէ Անգլիան ուրիշ կոմբինացիաների մասին է մտածում, աշխատում է հնար գտնել Գերմանիայի և Ֆրանսիայի յարաբերութիւնները լաւացնելու, հարթելու։ Լրագիրները արդէն առանձնապէս շեշտեցին, որ Վիլհելմ կայսրը ճաշի էր գնացել Բեռլինի ֆրանսիական դեսպանի մօտ, իսկ այս քանի օրս Պարիզի գերմանական դեսպանը ճաշ է տուել ի պատիւ ֆրանսիական հանրապետութեան նախագահ Պուանկարէի։

Որքան էլ սօցիալ-դեմօկրատները պնդելիս լինեն, թէ պատմութիւնը տնտեսական շահերի և դասակարգային մրցումների արդիւնք է միայն, բայց խնձոյքները և կանայք դեռ շարունակում են դեր կատարել մեծ գործերի մէջ, պատմական անցքերին այս կամ այն ուղղութիւնը տալու։

Ո՞վ գիտէ, այդ ճաշերի ժամանակ խմված շամպանիայի ազդեցութիւնը երևան գայ Թիւրքիայի և Պարսկաստանի տնտեսական շահագործման ապագայ բաժանումի ժամանակ։ Ինչ վերաբերում է առաջինին, եթէ երիտասարդ թիւրքերը իրանց գոռոզ տենչանքներով չը ստիպեն Եւրօպային կրճատելու Թիւրքիայի անօգուտ ու անիմաստ գոյութիւնը, Թիւրքիան դեռ կարող է երկար ապրել՝ մինչև Եւրոպան համաձայնութեան գայ նրա մասին։

Սօֆիա Դանիէլ-Բէկ

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Կ. Պօլսից հեռագրում են, որ Ֆրանսիան, Ռուսաստանի պահանջով, կնքված փոխառութիւնը տալու է մաս-մաս Թիւրքիային, որպէսզի վերջինս այն չը ծախսէ ռազմի պէտքերի վրա և մինչև որ Բ. Դուռը չը մտցնէ հայկական բարենորոգումները։

◆ Տեսնելով որ ֆրանսիական ղեկավար շրջանների հետ բանակցութիւնները աջողութեամբ չը պսակվեցին, Բ. Դուռը փոխառութիւն ստանալու համար այժմ բանակցում է գերմանացի դրամատէրերի հետ։ Գերմանական կառավարութիւնը աշխատում է, որ փոխառութիւնը (400,000 Թիւրքական ֆունտ) աջողվի։

◆ Կ. Պօլսից հեռագրում են, որ «Մ. և Ա.» կոմիտէի վերջին նիստերին քննվեցին ռուս-թիւրքական յարաբերութիւնները։ Առանձնապէս հետաքրքրական էր այն նիստը, ուր կովկասցի Ահմէդ Աղայեվը, որ յայտնի է իբրև բացարձակ հակառակորդ Ռուսաստանին, արտասանեց այդ հարցի առիթով մի երկար ճառ, և յենվելով վերջին դէպքերի վրա, ապացուցեց, որ Ռուսաստանը նկատի չունի նոր տէրրիտօրիալ նուաճումներ, ուստի և Թիւրքիան երկիւղ կրելու առիթ չունի։ Բացատրելով գոյութիւն ունեցող թիւրիմացութիւնները փոխադարձ անվստահութեամբ, Աղայեվը խորհուրդ տուեց ամեն տարի Ռուսաստան ուղարկել երիտասարդների կրթութիւն ստանալու և կազմակերպել թիւրքերի էկսկուրսիաներ դէպի Ռուսաստան։

◆ Պետերբուրգում տեղեկութիւններ են ստացվել, որ օսմանեան բարձր օֆիցէրութեան մէջ սկսվել են յուզմունքներ զինուորական մինիստր Էնվէր-փաշայի պատճառով, որ վերջերս պաշտօնանկ արաւ 280 օֆիցէրի, որոնց թւումն են շատ յայտնի Աբուք և Նազիկ փաշաները։ Զինուորականները մտորում են սպանել Էնվէր-փաշային։ Էնվէր-փաշան կասկածում է, որ արդէն երևան հանված դաւադրութեան մէջ մասնակից են մեծ գեներալները, որոնց և առաջարկվեց հեռանալ մայրաքաղաքից, սակայն Աբուք և Նազիկ փաշաները իրանց մեղաւոր չը գտնելով հրաժարվում են կատարել Էնվէր-փաշայի պահանջը։

◆ Բօլգարիան և Թիւրքիան պայմանաւորվել են տալ՝ առաջինը 20,000 զինուոր, իսկ երկրորդը—պայթուցիկ նիւթերի մի պահեստ։ Մակեդոնիայի յունաբնակ և սերբիաբնակ մասերում թիւրք-բօլգարական միացեալ ոյժերը ապստամբութիւն են առաջ բերելու եւրոպական միջամտութիւն ստեղծելու դիտաւորութեամբ։

◆ Վիէննայից հեռագրում են, որ բալկանեան հարցում լուրջ թիւրիմացութիւններ են ծագել Ռուսաստանի և Աւստրիայի միջև։

◆ «Н. Вр.»-ին հեռագրում են Բուդապեշտից, որ այնտեղ Վիէննայից պատուիրագրութիւն է ստացվել ուգրօրուսների դատավարութեան առիթով Ռուսաստանից մեկնած կոմս Բօբրինսկիին կալանաւորելու մասին։ Ունգարական կառավարութիւնը մերժել է յիշեալ պատուէրը կատարելու։

◆ Պետերբուրգում անձնասպան եղաւ ֆուտուրիստ Կազանսկին։

◆ Դուրացցօ է մեկնել պրինց Վիդի աւագ-հօֆմարշալ ֆօն-Տրոտան, որին յանձնարարված է տեսնել անհրաժեշտ պատրաստութիւնները ալբանական պետութեան ներկայացուցչի առիթով։ Ինքը պրինց Վիդը կը մեկնէ Դուրացցօ փետրվարի 8-ին (ն. տ.)։

◆ Պետերբուրգից հեռագրում են, որ կառավարութիւնը թոյլատրել է ձեռնարկել Թաւրիզի երկաթուղու կառուցմանը։

◆ Պետ. Դումայի բիւջէտային մասնաժողովում քննվեց արդարադատութեան մինիստր Շչեգլօվիտօվի առաջարկութիւնը հիմնելու կարգապահ ատեան սենատօրների վարմունքների համար։ Պատգամաւոր Շինգարեվը ասաց, որ այդ տեսակ կարգապահ ատեաններ հարկ է հաստատել և ռեստօրաններում սկանդալներ սարքող մինիստրների համար։ Շինգարևի ակնարկը առաջ բերեց ընդհանուր ծիծաղ։ Շչեգլօվիտօվի առաջարկութիւնը ընդունվեց։

◆ Թիւրքիայի սահմանակից շրջանից հեռագրել են Դիլման, որ Նորդուզում և Բաշկալից դէպի Վանը տանող ճանապարհին գտնվել են քարածուխի հանքեր։ Այդ տեսակ բնական հարստութիւն յայտնագործվել է նաև Ուրմիայի և Թաւրիզի շրջակայքում։

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՊԵՏԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԹԻՖԼԻՍԻ ՃԻՒՂԸ
Արժեթղթերի կուրսերը
24 յունվարի

I կ. Ներք. փոխ. խ. տոմս.	514 ր. — կ.
II » » »	425 ր. — կ.
III Ազնւակ. բանկ. »	354 ր. — կ.
4% Պետական ռենտա	92 ր. $87^1/_2$ կ.
5% Արտաք. փոխառ. 1906 թ.	102 ր. $37^1/_2$ կ.
5% Ներքին » 1905 » I հրատ.	103 ր. 50 կ.
5% » » II հրատ.	103 ր. 50 կ.
5% Պետ. Ազնւ. բանկ. գր. թ.	99 ր. $62^1/_2$ կ.
$4^1/_2$ » » » »	90 ր. $62^1/_2$ կ.
4% » » » »	88 ր. $37^1/_2$ կ.
$3^1/_2$% » » » »	82 ր. 25 կ.
5% Գիւղ. հող. բան. վկ.	99 ր. $62^1/_2$ կ.
$4^1/_2$% » » » »	90 ր. $62^1/_2$ կ.
4% » » » »	89 ր. $37^1/_2$ կ.
5% Արտաք. փոխառ. 1908 թ.	105 ր. — կ

Օտարերկրեայ դրամների կուրսը

Լոնդօն 10 ֆ. ստեր.	94 ր. 95 կ.
Բեռլին 100 մարկ	46 ր. 34 կ.
Պարիզ 100 ֆրանկ	37 ր. 68 կ.
Թաւրիզ 10 ղրան	1 ր. 73 կ.
Կ. Պօլիս 1 լիրա	8 ր. 65 կ.

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

1913 թ-ի ապրիլի 18-ից մինչև 1914 թ. ապրիլի 17-ը (ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ.—Արագ գնացքը № 6—10 ժ. 16 ր. առ., հասնում է Աղստաֆա 12 ժ. 34 ր., Գանձակ 3 ժ., Եւլախ 4 ժ. 31 ր., Հաջի-Կաբուլ 8 ժ. 6 ր. եր., Բագու 11 ժ. 13 ր. գիշ.։ Փօստատար գնացքը № 4—10 ժ. 16 ր. գիշ., հասնում է Աղստաֆա 1 ժ. 6 ր. գիշ., Գանձակ 4 ժ. 16 ր. առ., Եւլախ 6 ժ. 15 ր. առ., Հաջի-Կաբուլ 10 ժ. 46 ր. առ., Բագու 3 ժ. 31 ր. ցեր.։ Մարդատար գնացքը № 8—6 ժ. 29 ր. եր., հասնում է Աղստաֆա 8 ժ. 50 ր. եր., Գանձակ 11 ժ. 23 ր. գիշ., Եւլախ 1 ժ. 1 ր. առ.։ Հաջի-Կաբուլ 4 ժ. 42 ր. առ., Բագու 7 ժ. 53 ր. առ., Խառն գնացքը № 106 (Մարդատարի արագութեամբ ապրանքների համար)—4 ժ. 23 ր. առ., հասնում է Աղստաֆա 8 ժ. 41 ր. առ., Գանձակ 1 ժ. 7 ր. ցեր., Եւլախ 5 ժ. 19 ր. ցեր., Հաջի-Կաբուլ 12 ժ. 29 ր. գիշ., Բագու 7 ժ. 28 ր. առ.։

ԲԱԹՈՒՄ.—Փօստատար գնացքը № 3—9 ժ. 51 ր. առ., հասնում է Միխայլօվօ 1 ժ. 56 ր. ցեր., Բաթում 11 ժ. 8 ր. գիշ.։ Մարդատար գնացքը № 7—4 ժամ 40 ր. ցերեկվայ, հասնում է Միխայլօվօ 8 ժ. 46 ր. եր., Բաթում 5 ժ. 40 ր. առ.։ Մարդատար գնացքը № 9—10 ժ. 30 ր. գիշ., հասնում է Միխայլօվօ 2 ժ. 31 ր. գիշ., Բաթում 10 ժ. 59 ր. առ.։ Խառն գնացքը № 107 (մարդատարի արագութեամբ ապրանքների համար)—2 ժ. 48 ր. գիշ., հասնում է Միխայլօվօ 8 ժ. 20 ր. առաւ., Բաթում 10 ժ. 18 ր. գիշ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ.—Փօստատար գնացքը № 4/3—12 ժ. 51 ր. ցեր., հասնում է Ղարաքիլիսա 8 ժ. 10 ր. եր., Ալէքսանդրօպօլ 11 ժ. 48 ր. գիշ., Էջմիածին 5 ժ. 12 ր. գիշ., Ուլուխանլու 5 ժ. 40 ր. գիշ. (առանց Երևան մտնելու), Նախիջևան 10 ժ. 15 ր. առ., Ջուլֆա 11 ժ. 42 ր. ցեր.։ Մարդ.-ապրանքատար գնացքը № 24/23 (միայն II և III կարգի վագոններով)—8 ժ. 8 ր. եր., հասնում է Ղարաքիլիսա 3 ժ. 23 ր. գիշ., Ալէքսանդրօպօլ 6 ժ. 57 ր. առ., Էջմիածին 12 ժ. 10 ր. ցեր., Ուլուխանլու 12 ժ. 38 ր. ցեր., Երևան 1 ժ. 33 ր. ցեր.։ Մարդատար-ապրանքատար գնացքը № 14/13—12 ժ. 46 ր. գիշ., հասնում է Ղարաքիլիսա 8 ժ. 13 ր. առ., Ալէքսանդրօպօլ 11 ժ. 50 ր. ցեր., Կարս 4 ժ. 18 ր. ցեր.։

ԲՕՐԺՕՄ.—Մարդատար գնացքը № 17/18—8 ժ. 2 ր. առ., հասնում է Գօրի 10 ժ. 41 ր. առ., Բօրժօմ 9 ժ. 31 ր. ցեր.։ Մարդատար № 19/20—3 ժ. 18 ր. ցեր., հասնում է Գօրի 5 ժ. 59 ր. ցեր., Բօրժօմ 1 ժ. 2 ր. երեկ.։

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ

ԲԱԳՈՒԻՑ.—Արագ գնացքը № 5—9 ժ. 35 ր. եր. Փօստատար գնացքը № 3—9 ժ. 1 ր. առ.։ Մարդատար գնացքը № 7—3 ժ. 53 ր. ցեր.։ Խառն գնացքը № 107—2 ժ. 12 ր. գիշ.։

ԲԱԹՈՒՄԻՑ.—Փօստատար գնացքը № 4—9 ժ. 16 ր. երեկ.։ Մարդատար գնացքը № 8—5 ժ. 54 ր. ցեր.։ Մարդատար գնացքը № 10—8 ժ. 40 ր. առ.։ Խառն գնացքը № 106—3 ժ. 38 ր. գիշ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ.—Փօստատար գնացքը № 4/3—7 ժ. 32 ր. եր.։ Մարդ.-ապրանքատար գնացքը № 26/25—(II և III կարգի վագոններով)—10 ժ. 50 ր. առ.։ Մարդ.-ապրանքատար գնացքը № 16/15—7 ժ. 28 ր. առ.։

ԲՕՐԺՕՄԻՑ.—Մարդատար գնացքը № 17/18—11 ժ. 7 ր. եր.։ Մարդատար գնացքը № 19/20—7 ժ. 38 ր. առ.։

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բժշկ. Բ. Նաւասարդեանի
Հիմնված 1880 թ.
(Գոլովին, Վօրոնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
606»-ի և «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ՝ առ. 11—12 ժ.
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վերքաբուժութեան վեներական (սիֆիլիս) հիւանդութիւն։
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—1—2 ժ. ներքին և երեխայոց հիւանդութ.։
Զ. Ի. ՔԱՍԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութիւն, կանանց և երեխայոց հիւ.։
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւանդութ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական, վերքաբուժութեան և միզաուղ. հիւ.։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ՏԷՐ-ԳԱՒԻԹԵԱՆ—12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—6—7 ժ.։
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—11

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀՐԱՒԷՐ

Կիրակի, ցերեկվայ ժամը $11^1/_2$-ին, յունվարի 26-ին 1914 թ., Քամոյեան ս. Գէորգ եկեղեցում կայանալու է ծխական ընդհանուր ժողովի շարունակութիւնը։

Զբաղմունքի առարկաներն են՝

1) Հոգաբարձութեան և դպրոցի գործունէութեան տեղեկագրի ընթերցումը.
2) 1912 թ. տարեկան հաշւի քննութիւն.
3) 1913 թ. նախահաշւի » »
4) Ծխական տուրք և նրա իրագործումը.
5) Վերստուգող Ցանձնաժողովի երեք անդամի ընտրութիւն։

Քամոյեան ս. Գէորգ եկեղեցու
Հոգաբարձութիւն

Ծանօթ.—Այս ժողովը 4-րդը լինելով, հոգաբարձութիւնը խնդրում է Մեծարգոյ պ. պ. ծխականներին անպատճառ գալ ժողովի, որպէսզի հնար լինի, առանց այն էլ ուշացած, խնդիրներին որոշում տալու։ Եթէ այս ժողովը ևս չը կայանայ, հետևեալ և վերջնական ժողովը տեղի կունենայ նոյն տեղում և նոյն ժամին կիրակի, փետրվարի 2-ին, որի համար առանձին հրաւիրաթերթիկներ չեն ուղարկվի։

55. 2—2

Մամուլի տակ է և շուտով լոյս կը տեսնի ընդարձակ
ԷՖԵՄԷՐՏԻ
ԵՐԱԶԱՀԱՆ
ութ հին և նոր տարբեր մեկնիչներից համեմատութեամբ։
(հ. 2.) 52. 2—2

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
„ԾԻԾԱՂԻ ՏԿԶՈՐ“



Անեկդօտների և սրախօսութիւնների ու Մոլլա Նասրէդդինի ընտիր առակների ժողովածու։ Գրքի երեսին այս նկարը մեծ գիրքով։ Գինն է 20 կոպ.։ Դիմել Թիֆլիսի հայ գրավաճառներին և կազմողին՝ Тифлисъ, Семеновская ул. № 9. А. Г. Есаянцу. Գրքի գինը և ճանապարհի ծախսը 9 կօպ. մարկաներով ուղարկել առաջուց։ Գումարով ուղողներին 100 հատը կէս գնով, այսինքն 50% զեղչ. 50 հատին 40% զեղչ. 25 հատին 30% զեղչ։ Ճանապարհածախսը գնողի վրա։ Գումարով ուղողները պէտք է զրկեն կանխավճար, մնացեալը վերադիր վճարով։
(օ.մ.) 29. 20—6

„ՄՇԱԿԻ“ ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ
ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ
Լ. ՏՕԼՍՏՕՅԻ հետևեալ երկերը.
1) ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆԸ, Թարգմ. Սուրխաթեանի . . . . 30 կ.
2) ԿՈՆՖՈՒՑԻՈՍ (Չինական իմաստունը), խմբագրութեամբ Լ. Ն. Տօլստօյի, կազմեց Ա. Բուլանժէ, Թարգմ. Սուրխաթեանի . . . . 7 կ.
3) ԱՍԱՑՈՒԱԾՆԵՐ ՄԱՀՕՄԵԴԻ, ընտրված Լ. Տօլստօյից, Թարգ. Լ. Դանիէլեանի . . . . . 5 կ.
4) ՔՈՅՐԵՐԸ, Թարգ. Դանիէլեանի . 5 կ.
5) ԻՆՉՈՎ ԵՆ ԿԵՆԴԱՆԻ ՄԱՐԴԻԿ, Թարգմ. Լ. Դանիէլեանի . . . 10 կ.
Նրանք, որոնք այս գրքերից մի-մի օրինակը պահանջեն մեզանից փողը կանխիկ ուղարկելով, կը ստանան 10 % զեղչ և ճանապարհածախսը մեզ վրա։ Վերադիր վճարով պահանջողներին զեղչ չի լինի։
Հասցէն՝ Ред. газ. «Мшакъ», Тифлисъ.
(3) 10—6

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
„ՊԱԿԷ“
յայտարարում է ի գիտութիւն ճանապարհորդների և ապրանք ուղարկողների, որ Ընկերութեան շոգենաւ «ՖՐԻԺԻ» (նաւապետ Միտրէսէյ) մեկնում է Բաթումից Մարսէյլ, հանդիպելով Տրապիզօն, Սամսոն և Կ. Պօլիս
Հինգշաբթի, յունվարի 30-ին (փետրվարի 12-ին ն. տ.) 1914 թ.
Տեղեկութիւնների համար խնդրում են դիմել Ընկ. Թիֆլիսի գործակալ պ. Ս. ԿԻՒԼՊԵՆԿԵԱՆԻՆ, իր գրասենեակում, որ գտնվում է Արմեանսկի բազարում՝ Գօստինի դվօր Մանթաշեանների։ Հեռախօս № 7—21.
22. 25—2

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный